891.542-93
Ղ-2

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ԱՍԿԵՐ» ԱՄՍԱԳՐԻ
№ 6.

Ռ. ՊԱՏԿԱՆԵԱՆ

ՁԱԽՈՒ

Ն. ՆԱԼԲԻՋԵԻԱՆԻ ԲԱՐԲԱՌԻՑ ՓՈԽԱԳՐԵՑ

ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆ

ԹԻՖԼԻՍ
ԷԼԷՔՏՐԱՅԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ. ՊՕԼԻՍ. 7.
1909

30 MAY 1911
29 ar
3304

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ՀԱՍԱՆԵՐ» ԱՄՍԱԳՐԻ
№ 6.

Ռ. ՊԱՏԿԱՆԵԱՆ

ՉԱԽՈՒ

Ն. ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԲԱՐԲԱՌԻՑ ՓՈԽԱԴՐԵՑ

ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆ

ԹԻՖԼԻՍ
ԷԼԷՔՏՐԱՇԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ. ՊՕԼԻՑ. 7.
1909

18 JUL 2013
12088

ՁԱԽՈՒ

Ջրկիր Մարտիրոսի պատմածը

Գարունը դեռ հասած չէր, բայց էն տարին շոքը էնպէս վաղ էր կոխել, որ փետրուարի տասնեհինգին— քսանին արդէն դալար-արօտը, բանջարը գետնից մէկ թիզ վեր էր ելել։ Մարտի սկզբին արդէն տարմերը եկել էին հեռու տեղերից և տանիքների կրամիտների մէջ սկսել էին իրենց բունը շինելու, կռունկները, վայրենի սագերը երամ-երամ, կռկռալով Դոն գետի կողմից դէպի Ռուսաստան էին թռչում գնում. էլ վախ չըկար յանկարծակի ցրտերից։ Մի քանի օր էլի անցաւ, Արարիչ Աստուած, էնպիսի շոքեր արաւ, որ բոլորովին յունիսի տօթ ու տապն էր... Չորութիւնից գետինը սկսեց ճաքճքել, ձիւնի թողած խոնաւութիւնը վաղուց անցել անհետացել էր. հողագործները Աստուած Աստուած էին կանչում։ Եթէ էլի մի քանի օր էտպէս շարունակւելու լինէր, ամբողջ ցորենը պիտի թառամէր, փչանար։

Էտ ժամանակները ինչպէս կըլինի որ ձիս ոտքը վնասել էր, ոչ միայն բեռ քաշել, ոտքի

վրա կանգնելու ուժ չունէր անասունը։ Բայց այդիս անպատճառ ջրել էր պէտք, թէ չէ էնքան տարեայ աշխատանքս մէկ շաբաթեայ մէջ պիտի գնար։ Ուզէի չուզէի մէկ ջրկիր պիտի բռնէի, պէտք է գետից—նկատուած է որ աղբիւրի ջուրը պարտէզին օգուտ չի տալիս—տակառ տակառ կրել ու դոյլերով ծառերի տակը լցնել տայի։ Էնպէս էլ արի. բանւորիս յատկապէս ջրկիր Մարտիրոսի եանից ղրկեցի, որ վաղւանից սկսի գետից ջուր կրել։

Միւս օրը բազար գնացի և մինչև կէսօրը, ինչպէս սովորութիւնս էր, խանութումս մնացի։ Երբ կէսօրւայ ճաշին տուն վերադարձայ, Մարտիրոսը երկու ձեռքին երկու դոյլ (վեդրո) անդադար տակառից ջուր էր քաշում և պարտէզիս տակառիկներն էր լցնում, բանւորս էլ—Խրիմից նոր ծառեր էի ապսպրել—տեղ-տեղ փոսեր էր փորում։ Հացից դեռ նոր էի վեր կացել, մեր Մարտիրոսը էլի մէկ տակառ էր բերել գետից և պարտէզս կրելու վրա էր, որ ես էլ էնտեղ գնացի՝ նայեմ, բանւորս ի՞նչ բանի վրա է։

Մի հին ծիրանի ծառս էն ձմեռ ցուրտը խփել չորացրել էր, բանւորիս պատւէր էի տւել որ արմատով հանի և նորից այնտեղ մի փոս փորի, որ նոր ծառ տնկեմ։ Երբ պարտէզս մըտայ, հէնց էտ փոսը փորելու վրա էր բանւորս։ Գնացի կանգնեցի էտ փոսի ափին և թըմ-

բածի պէս մնացի. շատ կեցայ էտպէս, քիչ կեցայ, չը գիտեմ. միայն բաւականի ժամանակ մնացած պիտի լինեմ, քանի որ Մարտիրոսը այդ նոր բերած տակառն էլ արդէն դատարկել էր և սուս-փուս ետևս կանգնել էր, միտքը երևի փող ուզենալն էր, բայց երեսը չէր բռնում ինձ բան ասելու, ձեռքը խաչ կապած կանգնել էր խեղճ մարդը։ Մէկ էլ ետ դառնամ, ի՞նչ տեսնեմ. էտ մեր Մարտիրոսը սառած քար կըտրած կանգնել է, աչքը փոսից չի հեռացնում, ուղիղ մէջն է նայում, ու աչքից առատ-առատ արտասուք է վազում ու գետնին է թափւում...

«Հածէ (այ տղայ), ի՞նչ եղաւ քեզ» հարցնում եմ։ Բան չի ասում։

«Հածէ Մարտիրոս, — ասում եմ,—գժւել ես, ի՞նչ է, էտ հասակի մարդ լաց կը լինի՞ որ, չե՞ս ամաչում, երեսիդ գոյնին մէկ նայի՛ր, բոլորովին մեռել ես ու»։

Մարտիրոսը էլի սուս կանգնել է, փոսի մէջն է նայում։ Էտ ժամանակ բանւորս հողը փոսից հանեց ու մի կողմ շպռտեց. հողի հետ մի փթած փայտի կամ ոսկորի պէս բան էլ կար, որն որ գլորւեց հէնց ոտքիս հասաւ։ Յանկարծ մեր Մարտիրոսը խելագարի պէս վրա ընկաւ էտ փթած ոսկորին, շտապով գետնից վերցեց ու դիւահարի ձայնով կցեց կանչելու.

«Եանկա, եանկա (տանտիկին, խանում),

վարպետ, վարպետ, Մկրտիչ վարպետ, ահա ձեր կորած չախուն, ահա էն չախուն... գտնուեց... գտնուեց... Մեռնեմ անունիդ, սուրբ Մինաս, վերջը վերջը դու լոյս հանեցիր իմ կորուստը»։

Կանգնած տեղս սառած մնացի, էսպիսի զարմանալի բանի դեռ իսկի հանդիպած չէի, աչքովս չը տեսնէի ու ուրիշից լսէի—բոլորովին չէի հաւատայ, որ Մարտիրոսի պէս ծանր բնութքով մարդը—տասնուհինգ քսան տարուց ի վեր նրան ճանաչում էի – էտպէս խենթ-մենթ դուրս տայ։ Ի՞նչ մեղքս պահեմ, խեղճ մարդուն խելագարուած կամ բռնուած կարծեցի, բայց վերջը, երբ բանը տեղով իմացայ, մտքիս մէջ մեղայի եկայ և էտ կարծիքս փոխեցի։

Մարդուն հազիւ-հազ խելքի բերի, թէ չէ խեղճը հարբածի պէս բան եղել էր։ Էտ փթած ոսկորը ձեռքը ամուր բռնած, հայ-հայ պատերն է բարձրանում, «ճանկա» է կանչում, «վարպետ» է կանչում, մէկ էլ լռում է, մինչ դեռ Մկրտիչ վարպետի մեռնելը քսան տարուց աւելի է, նրա կնոջ մեռնելն էլ քառասուն տարուց պակաս չի լինի։

Էս տունս, որտեղ այժմ ես կենում եմ, ժամանակով տիրացու Մկրտչինն էր։ Էտ տիրացու Մկրտիչը սրանից յիսուն տարի առաջ էս տան մէջ կարդացնելիս է եղել։ Ինչ որ էլ լինի, մէկ խօսքով, բանի եղելութիւնը էս էր։

Բայց դու արի ու հիմա հարցրու թէ՝ ինչու Ջրկիր Մարտիրոսը փոսի առջև սառած մնացել էր ու լաց էր լինում, ինչու փթած ոսկորը տեսաւ թէ չէ, գժի նման գետնից վերցրեց ու սկսեց «ճանկա» ու «վարպետ» պըտրել։ Էտ էլ Ջրկիր Մարտիրոսը իր բերանով թող պատմի։

«Սրանից յիսուն ու հինգ տարի առաջ, էս քո կեցած տան մէջ կենում էր Մկրտիչ անունով մի տիրացու և քանի որ էս տիրացուն իր ընկերակիցների մէջ ամենից գիտունն էր յիշւում—այսինքն՝ ասել եմ ուզում թէ՝ դա քիչ-միչ գրել-կարդալ գիտէր, միւսները էն էլ չը գիտէին—իր համար պարապմունք էր արել աշակերտներ սովորեցնելը։ Ես էլ էտ ժամանակները կը լինէի գուցէ տասը տարեկան։ Մէկ անգամ պապաս (հայրս) թևից բռնեց ու տարաւ տիրացու Մկրտիչի մօտ աշակերտ տուեց։

Պապաս-Աստուած հոգին ողորմի—չար բնութքով մարդ էր։ Ինքը որովհետև մինչև պսակելու օրը հօր փայտից դողացել էր, էնպէս էլ ինձ էր ուզում խիստ պահել։ Պարծանք չը լինի ասածս, իմ բնութքս աւելի մամայիս (մօրս) բնութքին էր նման—սուս-ու-փուս, վիզս ճուկ։ Բայց էտ չօգնեց. երբ որ պապաս առաջին անգամ տարաւ ինձ Մկրտիչ վարպետին տուաւ, նախ և առաջ մէկ լաւ ականջս ողորեց, յետոյ մէկ ապտակ էլ շրխկացրեց երեսին և ա-

սաւ. «Նայիր, վարպետ, որդուս բերել եմ, կաշին քեզ, ոսկորը ինձ. ինչ կուզես արա, ուզում ես խեղդի, ուզում ես քերթի, ուզում ես մորթի, էնքան է որ յիմար եմ տալիս, խելօք պիտի առնեմ»։

Վարպետ ասած բանդ մեր ժամանակները, ինչ ասեմ քեզ, թէ որ ասեմ գայլ-գազանից էլ սատանական էր, արդեօք ղորթ ասած չեմ լինի։ Էտ հիմա է որ երեխին վախեցնել որ ուզում են, «ահա արջը եկաւ, ահա վիշապը եկաւ, ահա մրոմրասը եկաւ» են ասում, որ երեխան մի քիչ սրտի մէջ վախ ունենայ ու իր չարութիւնից ձեռք վերցնի. մեր ժամանակները «վարպետի» անունը որ տային, լեղիները կը պատռէր, փախչող-փախչողի կը լինէինք. որս դոլաբը կը մանէր, որս ծալքի մէջ կուչ կը գար, ժամերով կը կենար, ձայն-ծպտուն չէր հանի— էտպէս սասան-սասանի կը գայինք։

Երբ ես աւելի փոքր երեխայ էի, վարպետի անունը լսելիս մէկ ձիգ հասակով, երեսը չորչոր, սուր մօրուքով, շալէ կապայով, մէկ ձեռքին տէր-ողորմեան, մէկէլ ձեռքին կարմիր ճիպոտ—էտպիսի մի հրէշ էի երևակայում, երբ որ պապաս ձեռքիցս բռնեց, տարաւ վարպետի տուն և ինձ յանձնեց նրան—իր ձեռքով ականջս քաշածը ու ապտակ տուածը էն ոչինչ—մրտքիս մէջ էնպէս կարծեցի, որ ողջ-ողջ ինձ պա-

տանքեցին և սև հողը դրին... Որբի պէս վիզս ճուկ կանգնել եմ, իսկը այն կապած-կապկպած մատաղի դառը, որ մինչև ժամկոչի դանակ սրելը՝ սուս-փուս պառկել է նրա ոտքի տակ...

Մկրտիչ վարպետը ծալապատակ նստած էր մէկ քառակուսի պտիկ մինդարի վրա—մեր ժամանակները հիմիկուապէս վարպետի տանը աթոռներ, նստարաններ, սեղաններ չը կար—երեսուն հինգ քառասուն աշակերտներ էլ կողքէ կողք, մէջքները պատերին արած, իրենց մինդարների վրա նստած, ձեռներին մի մի պնակիտ կամ քերական պնակիտ—տախտակի վրա կպցրած տպագիր այբուբեն քերականայբենարան գիրք։ Դասերն էին սովորում. այն սասանական «ճիպոտը» վարպետի առջևն էր։ Էսօրուայ պէս միտքս է. երկայնքը հինգ չարէք կը լինէր, բութ-մատիս հաստութիւնը, ծայրին ծակ ունէր, ծակի մէջն էլ թել էր անց կացրած, որ պատից կախւի։ Աշակերտներից մի երկուսին ճանաչում էի, բայց շատերին առաջին անգամն էր տեսածս։

«Չէ, ինչու, ասաւ Մկրտիչ վարպետը. գուցէ որդիդ ուշադիր է լինում, դասը լաւ է սովորում, գուցէ խեղճը իսկի չարութիւն չի անում։ Էն ծեծը որ կայ, չարերի ու ծոյլերի համար է... Դու իսկի լսած չես. Տէր մեր Յիսուս Քրիստոս ասէ (երեսը խաչ հանեց, պա-

պաս էլ եանիցս), օրհնեալ է փայտն (ճիպոտը վերցրեց և ցույց տուաւ աշակերտներին), որով լինի արդարութիւն... Դէհ, էտ էլ էտպէս...

—Չէ,—ասաւ պապաս,—իսկի էտպիսի բան կը լինի՞... Էն աւետարանի խօսքը կայ ու կայ, բայց երեխան որ առանց ծեծի մեծանայ, մէկ օր ինքը—հեռու տանից տեղից — հօրն ու մօր վրա ձեռք կը բարձրացնի։ Աշխարհս էտպէս եկել է, էտպէս էլ պիտի գնայ։ Հիմա դու, ինչ է՝ վարպետ ես, մեր հնուց կարգերը ոտքի տակ պիտի տաս, ի՞նչ է... Իհարկէ, կարգդ Աստուած հասատ պահի... բայց երբ լսել եմ թէ որդուս երես ես տալիս, վախով չես պահում, երախտիքդ խնայում ես նրանից, սիրտդ թող չը ցաւի, թքել եմ ես քո գոված իմաստութիւնիդ վրա... Ի՞նչ է, դու կարծում ես թէ ես որդուս տիրացու կամ վարդապետ եմ ուզում անել... Էս չեմ ուզում,—ասաւ պապաս և բութ մատը խցկեց կողքի երկու մատների մէջտեղ...—Տէր-տէր, վարդապետ, տիրացու, ժամկոչ էտ ամենը մէկ տեսակի բաներ են։

Նայեաց սիրով հայրըդ գթած
Քաղցած ենք, տուր՝ մէկ կտոր հաց...

Իհարկէ, գրոց լեզուն գիտես, բերական ճարտասանութիւն, Աստուածաշունչ — ամենը կարդացել ես, բայց ասելուցս ինձնից քեզ խրատ չը լինի... «Էտ Աստուած-պապան Ադամ Եւային որ ստեղծեց—թէ որ գրել կարդալը լաւ բան էր, ինչու՞ իսկոյն առջևները մէկ քերական չը դրաւ, չասաւ թէ էս լաւ բան է, սովորեցէք»։ Ի՞նչպէս է որ ողորմած Աստուած յատուկ իր ձեռքով ստեղծած ադամորդուն լաւութիւն չէր կամենալ... Հ՞ը, ի՞նչպէս ես, ղորթ է ասածս, թէ չէ՞... Բայց ես քեզ դրանից է խելօք, խելքի պառկելու բան ասեմ։ Էտ գրել-կարդալ ասածդ ուրիշ հաշիւ ունի... Էտ պստիկ երեխան որ կայ, կատարեալ մի վայրենի գազան է. ինչպէս որ գազանին դնչկալով, շղթայով կը զսպեն, գառը կը դարձնեն, հէնց էնպէս երեխաներին էլ գրել կարդալով կը զսպեն, հոգիները ջանից կը հանեն, աչքերի լոյսը կը մարեն, կը մաշեն. ահա դրանից յետոյ երեխան օրինաւոր մարդ կը դառնայ, վիզը կը ծռի, սրտի մէջ ահ կունենայ, մեծի առջև ձեռքը խաչկապած կը կանգնի, մարդու սիրտ ցաւեցնելու տեղ՝ սիրտ շահելու կաշխատի, հարուստի ու իշխանի պատիւը կը ճանաչի... Ապա, ջանս, դու գիր կարթացող ես, իմաստուն ես, բայց քեզնից տեղով գիտեմ գրել-կարդալու օգուտը։

Ասաւ ու տեղից ելաւ։

—Էհ, ինչպէս որ ասի, էնպէս էլ կանես. վարձդ էլ ինչ որ է՝ չորս ամիսը մէկ կառնես։

Վարպետի վարձ տարեկան պիտի տայինք

երկու ռուբլի ասիգնացի, յիսուն հատ ձու, մէկ փութ ալիւր, մէկ հաւ և մէկ բադ։

Պապան գնաց, ես մնացի։ Վարպետս դարձաւ ինձ և ասաւ. «հածէ (ձօ) պստիկ, անունդ ինչ է»—Մարտիրոս է, ասի. ձայնս փորիցս էր դուրս գալիս։ «Հածէ Մարտիրոս, ասաւ, էս երկայն ճիպոտը տեսնում ես,» յետոյ մինդարի տակից հանեց մի փալախա, «էս ֆալախան էլ տեսնում ես»։ Ողջ մարմինս փուշ-փուշ եղաւ. երբոր կարմիր ճիպոտն և հաստ ֆալախան տեսայ, կարգին ջերմով բռնուածի պէս ամբողջ մարմնով դողացի։ «Հ՞ը, վախեցար, ասաւ վարպետս, շատ լաւ իմացիր որ չարութիւն արել ես թէ չէ, տապանիդ կաշին կը պլոկեմ,» ասաւ ու ճիպոտը ժը՛վ ժը՛վ ժը՛վ թափ տուաւ։

—Հեռդ քերական բերե՞լ ես, հարցրեց յետոյ։

—Հա, ասի ու քիսայիցս հանեցի մի հաստլիկ գիրք կարմիր կազմով ու պղնձէ կոճակներով.

—Էս ի՞նչ էլ, ասաւ վարպետը, բեր, մէկ տեսնեմ.

—Պապաս տուաւ, ասի ու գիրքը իրան տի։

—Հածէ ապուշ, սա քերականն է որ ձեռքդ տուել են։ Սա Նարեկ է ու։

—Պապաս տուաւ, ասի նորից, ուրիշ բան չը գտայ ասելու։ Ինչ նրա քերականը գիտէի, ինչ Նարեկը. էն բոպէին բացի ճիպոտից ու ֆալախայից ուրիշ բան չէի տեսնում աչքիս առջև։ Ինձ էնպէս էր երևում որ տան չորս պատերից ամեն տեղ ճիպոտներ ու ֆալախաներ են կախած, տղաների ձեռները մէկ մէկ ճիպոտ էին երևում ինձ, ոտներն էլ մէկ մէկ ֆալախա։ Առաջին անգամն էր վարպետի մօտ գնալս, Աստուած կը սիրես, ես ի՞նչ գիտէի՝ ի՞նչ ասել է կարդալ, գրել, քերական, Նարեկ։

—Անշնորհք, ասաւ Մկրտիչ վարպետը, տղան որ վարպետի մօտ է գալիս- էն գլխից ձեռքը քերական կը տան, քերականը որ վերջացնի, պստիկ սաղմոս կը տան, էն էլ որ վերջացնի՝ մեծ սաղմոսը կը տան. նրանից յետոյ ժամագիրք կը տան, յետոյ աւետարան կը տան, էն վերջը Նարեկ կը տան, էն էլ որ աւարտի, ասել է, օրինաւոր կարդալը վերջացրած կը լինի, վարպետից էլ դուրս կերթայ։ Բայց ապուշի գլուխ, արի նայենք, այսքան բան դու ե՞րբ պիտի աւարտես, որ Նարեկը կարողանաս կարդաս... Նայիր էտ տղաներին. ո՞րը չորս տարի է մօտս, որը երեք տարի է, մէջերը էնպէսներն էլ կան, որ հինգ տարի են սովորում, բայց մէկի ձեռքը Նարեկ տեսնում ես... Չէ, տղաս, գիր կարդալը էտ տեսակ հեշտ բան չէ, էս ներկարարին կաթսան չէ որ տղային մէջը գցես հանես ու հօր ձեռքը տաս «ահա, որդիդ պատրաստ է»։ Էյ որդիս, որդիս, դեռ շատ պիտի աշխատես, ձեռքիդ ափն

ու ոտքիդ տապանը դեռ շատ պիտի բշտի ու քանի անգամ կաշին պիտի փոխի, մինչև որ Նարեկին հասնես...

Ես գլուխս կախած լսում էի, ասածից էսքանը հասկացայ որ մկան պես թակարդ եմ ընկել, մէջիցը ազատուելու ճար չունեմ, մէկ կողմից խիստ հայրս, միւս կողմից դևի պես վարպետս, էս կողմը կրակ, էն կողմը բոց. որտեղ որ դառնայի՝ դժոխք էր։

Բայց դու Աստծու ողորմութիւնը տես—մեռնեմ Նրա սուրբ անունին։ Վարպետս պատից առաւ պնակիտը, հինգ հատ գիր ցոյց տուաւ՝ այբ, բէն, գիմ, դա, եչ, «մինչև կէսօր էսքանը կը սովորես. դասդ չը տուած տեղիցդ վեր չը կենաս ու տուն գնալ չը համարձակուես»։

Կարծեմ մինչև կէսօր ժամ կամ ժամուկէս էր մնում, ասել է՝ բաւականին ժամանակ կար։ Սկսեցի սերտել. էնպէս սիրով կարդացի, էնպէս սիրով սովորեցի որ—սուտ չասեմ—քառորդ ժամւայ մէջ էն դասը սերտեցի։ Գնացի կանգնեցի վարպետիս առջև, «դասս գիտեմ» ասի։ Տեսնեմ, ասաւ։ Ժըվըռ ժըվըռ գրի պէս ասի։

—Այ ապրիս, ասաւ. հինգ հատ գիր էլի որ տամ, ասաւ, կարող ես սովորել։ «Տեսնեմ, դուցէ կարողանամ» ասի։—Մէկ տեսնեմ շնորհքդ, ասաւ. գան. էն, ըթ՝ը, թ՝ն ու ժ՝էն տուաւ։ Կը հաւատաս, քառորդ ժամ անցած չանցած, էն էլ սերտեցի ու գնացի սոխակի պէս կարդացի վարպետիս առջև։ «Շէն կենաս,» ասաւ վարպետս. «էտ լաւ է, շատ ապրես, Մարտիրոս, աֆէրիմ քեզ։ Էլի հինգ գիր տամ, էն էլ կարող ես սերտել»։ Ես սիրտ առայ։—Ինձ համար էն ի՞նչ բան է որ, ասի. թէկուզ տասն ու հինգն էլ տուր, ասի, արդէն յանդգնացած. «Զէ, տասնուհինգը շատ է. մէկ անգամից կը շշկլուես. տասը հատն էլ բաւական է. ահա քեզ՝ ինի, լիւն, խէ, ծա, կէն, հո, ձա, ղատ, ճէ, մէն, յի. հերիք է էսքանը»։

Գնացի տեղս նստեցի, բայց սիրտս սեղմուեց, մտքիս մէջ կասկած ընկաւ՝ իսկ եթէ չը կարողանամ։ Աստուած հոգին լուսաւորէ, մամաս ինձ մէկ բան սովորեցրել էր՝ «երբ որ մէկ բանի ետևից ես ու նրան հասնել ես ուզում—ասել էր մամաս—մտքիդ մէջ սուրբ Սարգսին կանչիր. «սուրբ Սարգիս. դուն նեղացածիս հասնես» ու երեք անգամ երեսդ խաչ հանի՞ր։» Հիմա ես ժտքիս մէջ էտ աղօթքը ասի, բայց երեսս խաչ հանել թէ ամաչում էի և թէ վախենում։ Պստիկ էի, բայց էլի ճարտար էի. կամացուկ ձեռքս վարտիկիս գրպանը կոխեցի և էնտեղ խաչ հանեցի ու միամտած սկսեցի երրորդ դասը սերտել։ Հինգ անգամ իրար ետևից կարդացել էի կարդացած չէի—դու էս հրաշքին մտիկ արա—էտ էլ ջրի պէս սովորեցի։

Հիմա բանը էնտեղն է հասել, որ ինքս ինձ չեմ հաւատում. մտքիս մէջ ասում եմ. «էս երազ հո չէ, քնիս մէջը հո չեմ»։ Ձեռքս ծոծրակս եմ տանում, գլուխս քորել եմ ուզում, իբր թէ օջիլներն են կծում—մինչդեռ երէկ մամաս ինձ տաշտը նստացրել է, լաւ լւացել է, գլուխս էլ սանրով էնքան քերթել է, բոլոր օջիլները կոտորել է որ օջիլ չէ, մէկ անէծք էլ մնացած չէ—բայց միտքս էն է որ եղունգովս ծոծրակս կսմթեմ, որ տեղով իմանում՝ երազ է էս թէ իրականութիւն։ Ծոծրակս կսմթում եմ. եղբայր, ցաւ են զգում։ Ա, կասեմ մտքիս մէջ, երազ չէ եղել։ Ես էլ էտ էի ուզում...։ Վերջապէս կերթամ վարպետիս առջև ցցած կը կանգնեմ, «դասս գիտեմ» կասեմ ու ուղղակի մարդու աչքի մէջ կը նայեմ։ Վարպետս տեղից վեր է թռչում, «էս ինչպէս շուտով սովորեցիր» ասում է։ Ես սուս կանգնել եմ, մտքիս մէջ խնդում եմ վրան։ Մի քիչ կենալուց յետոյ, «չի լինի թէ, ասում է, էն գլխից գիտէիր այբուբենը ու հիմա գիտեցած դասերդ եկել ես նորից տալիս», ասում է։—Չէ, Աստուած վկայ, ասում եմ, էսօր առաջին անգամն է պնակիտը ձեռքս, ասում եմ։ «Ղուրթ», ասում է մարդը։—Հա, ասում եմ։ Մարդը զարմանում է։

Ախար ղորթ էլ զարմանալու բան էր. քաղաքի հիմք գցելուց ի վեր էսպիսի բան տեսնուած էլ չէր, լսուած էլ չէր.—Որ էնպէս է, աւրի նայեմ, դասդ ասա։ Ջուրի պէս դասս ասի։

—Այժմ թարս կարդա. մէկ տեսնենք, ասում է, այսինքն յի, մեն, ճէ, դաթ, ինչ որ է։ Թարսից էլ կարդում եմ. մարդը էլ աւելի զարմանում է։—Միւս դասերդ էլ միտդ են, մոռացել չես, ասում է։ «Չէ, մոռացած չեմ, ասում եմ։—Ասա, ասում է։ Էն էլ առանց շունչ քաշելու զրվրը զրվրը ասում եմ։—Թարս կարդա, ասում է։ Թարս էլ կարդում եմ։ Մարդու երեսը մէկ տեսակ կը լինի։ Ծոցից ժամացոյցը հանում է, նայում է—մինչև կէսօր էլի ուզիղ մէկ ժամ է մնում։—Մինչև դպրոց արձակելը պնակիտդ վերջացնել կարող ես, հարցնում է։ «Տեսնեմ՝ գուցէ կը կարողանամ,» ասում եմ։—Է՛, գնա սովորիր, ասում է, ու սկսում է միւսների դասերը նայել։ Ճիպոտն ու ֆալախան տեղերից շարժւում են ու իրենց շնորքը ցոյց են տալիս։ Տղաների ճիչ ու աղաղակների, լաց ու գոչումի մէջ ես մնացած բոլոր գրերն էլ սովորում վերջացնում եմ, այբ սէ—աս, վէվ այբ—վա, սավա, ծա ինի մեն—ծիմ, անաածիմ, էտ է կապում եմ, բոլորովին պատրաստ գնում նորից վարպետիս առջև կանգնում, էն էլ պատասխանում եմ։ Մարդու լեզուն պապանձւում է, խօսք չի կարողանում ասելու, և մենակ էս է ասում. «Մարտիրոս, մէկօր դու մարդ պիտի դառնաս»։

Հ.Ս.Խ.Հ. Հ.Ս.Ֆ.Հ. Ազգային Գրադարան 7/31 1929 Ա. Մեսրոպ

Ուրախ-ուրախ տուն եմ գնում և տեղն ու տեղով մամայիս եմ պատմում։ Մամաս սրտի ուրախութիւնից հայ-հայ ճաքւում է կինամարդը, ինքն իրան բռնել չի կարողանում ու իսկոյն գնում է հարևանների մօտ և ասում է թէ՝ էսպէս, էսպէս որդի ունեմ, ու իմ պատմածի վրա տասնապատիկ իրենից է աւելացնում, հնարում է թէ՝ կէս ժամւայ մէջ որդիս էնքան բան է սովորել, որ տիրացուի չափ, գուցէ աւելի էլ գիտի. ես ինչ գիտեմ, շատ, հոգևոր կառավարութիւնից ուրար պիտի տան ինձ ու, առաջնորդը ինձ գրագրութեան համար իրեն մօտ պիտի վերցնի ու, առում է էլի, բան չունես. կինամարդ չէ, մայր չէ, սրտի մուրազները եղածպրծածի պէս ասումէ, պատմում և մի կողմը քաշւում։

Բայց պապաս մէկ անգամից չը հաւատաց. «սուտ է ասում շան ցցնածը» ասաւ, երբոր մամաս նրան էլ պատմեց իմ հրաշքները՝ «այբուբենը ծայրէծայր վերջացնելու համար քիչ-քիչ երեք ամիս պէտք է, էն էլ ուր մտքով տղի համար։ Էտ մենք արհեստաւոր ենք՝ ասենք, գրի երեսը տեսած չենք, ինչ. մենք էլ խօ երեխայ ժամանակներս վարպետի մօտ գնացել ենք։ Մէկ երկու անգամ ֆալախայի համը չառած՝ լսած բան է, որ տղան այբբենը վերջացնի։ Պարծենում է, շատ, բոլ-բոլ սուտեր է փչում, դուն էլ կանխիկ փողի տեղ ես ընդունում։ Նա գիտի թէ ես կը ծուլանամ վարպետի մօտ գնալու և սուտը հանելու... Գիր կարդալը դու հանաք ես կարծում, ինչ... Ափսոս, ափսոս, մէկ քերական չը կայ, որ կարդալ տայի ու սուտը բռնէի.» Յետոյ դարձաւ ու ասաւ. «հա՛ծէ, էն տւած գիրքս ինչ արիր, մնա՞ծ է»։

Էն Նարեկը հանեցի քիսայիցս, իրան տւի ու ասի՝ Վարպետը ասաւ որ էս կարդալը դեռ վաղ է, դեռ քերական պիտի վերջացնեմ, յետոյ սաղմոս, միւսներն էլ շատ իրենց կարգով։

Պապայիս վրայից նկատելի էր, որ կամացկամաց սկսել է հաւատալ, որովհետև տեղից ելաւ, գտակը առաւ, դուրս գնաց ու մի քիչ ժամանակից յետոյ ետ դարձաւ ձեռքը մի բարակ գիրք բռնած։ «Ահա քեզ քերական, ասաւ, զգոյշ եղիր, չը կեղտոտես, չը պատռես, թէ չէ կաշիդ կը պլոկեմ. երեք շահի եմ տւել դեղավաճառ Սարգսին»։ Մեր ժամանակները—չը գիտեմ հիմիկ ինչպէս է—գիրքը, թուղթը, գրիչը, թանաքը դեղատանը կը ծախւէր։

Քերականը որ ձեռք առայ, ախորժակս բոլորովին կորաւ. առաւօտւանից բան կերած չէի, բայց սեղանին բերանս բան դնել չը կարողացայ, խելքս միտքս վարպետիս տանն էր, ֆալախայի, ճիպոտի վախը սրտից դուրս էր ելել։

Վարժատուն որ գնացի, դեռ տղաները հաւաքւած չէին, վարպետս էլ պարտէզ դուրս էր եկել—ահա էն տեղերը, ասաւ ու մատով ցոյց տուաւ զինջիրմէիս ծառի տեղը—բօլթա կը տար։ Ինձ որ տեսաւ՝ «հանէ, ինչու էտպէս շուտ եւ դարձար, հարցրեց, կերակուր չը կերար, ինչ»։—Չէ, կերայ, ասի։ «Էյ, մի քիչ հանգստանայիր դեռ» ասաց։—Հանգստացայ, ասի։—«Լաւ, ասաւ, ուզում ես՝ էստեղ խաղայ, թէ չես ուզում՝ գնա սենեակը նստիր»։ Քերականս ցոյց տի իրան, «ահա պապաս առաւ», ասի։—«Լաւ, ասաց, տղաները որ գան, կը սովորես։»—Չէ, ես հիմա եմ ուզում սովորել։ Դաս տուր ինձ ասի... «Ի՜, ասաւ, ինչ էտքան շտապով։ Չը լինի շուտով սովորել, խալֆա լինել ես ուզում, որ ինձպէս երեխաներ կարդացնես,» ասաւ հանաք անելով։ Ես բան չասի, սուս կեցայ, որովհետև իսկի մտքովս անցած չէր վարժապետ կամ տիրացու կամ տէրտէր լինել։ Էնքան ուզում էի՝ մամայիս, հարևանների առջև պարծենամ թէ՝ նայեցէք վրաս, ես ինձ համար մէկ բան եմ։ Երեխայութիւն, էնպէս չէ։

Վարպետս ձեռքիցս առաւ քերականս, մէկ երեսը դարձրեց—էն արդէն պնակիտի վրա սովորել էի—«ահա քեզ դաս,» ասաւ ու՝ այբ խէ չա, բեն ծա պէն դասը։ Գնա, սերտիր, ասաւ,

երեխաները որ հաւաքւեն, ես էլ որ տեղս նստեմ, կգաս դասդ կը պատասխանես»։

Գնացի սենեակը, տեղս նստեցի ու սկսեցի կարդալ։ Ի՞նչ տեսնեմ. իսկի դժւար չէ եղել, էլի նոյն այբ բեն գիմ դան էր. էտ էլ շուտ սովորեցի։ Վարպետս դեռ պարտէզումն էր, զափռանդի տերևներն էր փետում ու մէկ տուփի մէջ շարում։ Գնացի մօտը «դասս գիտեմ» ասի։ Մարդը ապշեց, բայց բան չասաւ, առանց մէկ սխալի դասս ծայրէծայր պատասխանեցի։ Լաւ, ասաւ, այժմ էս առ՝ այբ ժէ ճէ ռա, բեն ինի մեն սէ, ինչ որ է»։ Նորից գնացի տեղս. աչքի անց կացրի նոր դասս, տեսնեմ՝ էն էլ հեշտ է եղել, էլի իմ գիտցած այբբենգիմդան է, էնքան որ գրերը մէջէմէջ շարւած են։ Նորից գնացի վարպետի մօտ, դասս լաւ պատասխանեցի։ Ինչ խօսքս երկարացնեմ. դեռ տղաները նոր էին սկսել հաւաքւել—սուտ ասած չը լինեմ—գուցէ տասը դաս պատասխանեցի ու հասայ ա-փե-նեգերին, ու մինչև երեկոյեան զանգերը գրեթէ գրքի կէսը անցայ։

Պապայիս ասի, պապաս չը հաւատաց, կարծում էր թէ սուտ էի ասում. բայց երևում էր որ սկսել էր արդէն աւելի ինձ սիրել, վրաս տաքանալ։ Ով գիտի, գուցէ մարդը—Աստւած ողորմի հոգուն—միտք էր անում «էս լակոտի ասած քսաներորդ մասն էլ ղորթ որ լինի,

էլի վատ չէ»։ Մամաս խօ խեղճը տեղ չի գըտնում նստելու. սրտի խնդումից ինչ անի չանի, իսկոյն իր տօնական մետաքսէ շորը քանդում է ու ինձ համար Ս. Գէորգի օրւայ գեղեցիկ շոր է ձևում, մեծաս էլ (մեծ մայրս, տատս) իր ծածուկ սունդուկից հանեց մէկ թանկագին թաշկինակ, գոյնը վարդի պէս կարմիր, վրան՝ սիրամարգի պոչի աչքերի պէս կանաչ-կապոյտ նաշխերով, ու ինձ փողպատցու բախշեց. պապաս էլ խօսք տւաւ որ վաղը առաւօտեան կանուխ բազար գնայ, վարտիկցու կապոյտ նանկա առնի ու մէկ ջուխտ գեղին սափիանէ կօշիկ գնի։

Մարդուս լեզուն կարող է սրտիս խնդումը մեկնել... Կը հաւատաս, էն բոպէին ինձ մէկը թագաւորութիւն տար—ադամարդու համար դրանից լաւ էլ ինչ բախտ կայ—ես էնքան ուրախ չէի լինի, ինչքան որ էն երեկոյեան ուրախ էի... Վերջապէս միւս օրը, մինչև կէսօր քերականս ծայրէծայր աւարտեցի ու բերի պապայիս տի, «ահա, պապա ասի, անվնաս յանձնում եմ քեզ քերականս, ասի, էլ ինձ պէտք չէ. հիմա կարդը եկաւ պստիկ սաղմոսին»։

Պապաս որ լսեց՝ ապշած բերանը բաց մընաց։ «Հածէ, ղորթ ես ասում», ասաւ։—Ապա սուտ պիտի ասէի, ինչ, ասի։ «Հանաք ես անում, շան ցգնած։—Ի՞նչու հանաք պիտի անեմ,

ասի պարծենալով, որ չես հաւատում, գնա՛ վարպետիս հարցրու։

—«Հայդէ գնանք» ասաւ մարդը—Աստուած ողորմի հոգուն-ու գդակն առաւ, շտապ շտապ գնաց, ես էլ ետևից գնացի։ Երբոր վարպետիս տունը մտանք. «Բարև, վարպետ, ասաւ պապաս, ինչեր է ասում էս շան ցգնածը, ասաւ ձեռքով վրան ցոյց տալով, ղորթ է սրա ասածը թէ՝ երէկ ու այսօր համ պնակիտը վերջացրել է, համ էլ քերականը»—Հա՛, ասաւ Մկրտիչ վարպետը, ղորթ է, ղորթ, հիմա նրա համար մէկ պստիկ-սաղմոս պիտի գնես, էլի մէկ դաստա թուղթ, որովհետև, մեր կանոնով, քերական կարդացող տղան դեռ գիր չի գրի, բայց պըստիկ սաղմոսը որ սկսի, գրելուն էլ պէտք է սովորի։ Էսպէս է մեր կանոնը։ Հա՛, էլի թանաք ու գրիչ էլ առ ու տուր իրան, դրանք էլ պէտք են գրելու համար։

«Հա՛յ, շան կաթ կերած, ասաւ պապաս սրտի ուրախութիւնից. այ ապրես, Մարտիրոս, ապրես. մեռնելը կը կարծէի, էտ տեսակ իմաստուն եղածդ չէի կարծի...» «Տիրացու ախպէր, դարձաւ նա վարպետիս, խեղճը ասում էր, ասում էր—ես չէի հաւատում. մի ասիլ ասածը ղորթ է եղել։ Հայ մայրդ մեռնի, էսպիսի էլ զարմանալի բան... Հիմա, վարպետ, ախրը քեզ էլ մէկ բանով շնորհակալ պիտի լինենք, թէ

չէ՞...»—Էյ ինչ, ասաւ վարպետը սուտ-մուտ քաշելով. առջևներս օրեր շատ, մէկ օր երևի ամեն բան իր ճամփան կը գտնի... «Ճամփան ո՞րն է, հէնց էստեղից ուղղակի ոսկերչու մօտ պէտք է գնանք, մէկ տեսօք արծաթէ մատանիք պիտի պատուիրենք»։—Ի՞նչ ես էտպէս շտապում... դէ... Աստուծով... տեսնենք... գուցէ... Մարդը սրտի ուրախութիւնից խելքն ու գլուխը կորցրել էր։

Ինչպէս որ ասել էր, էնպէս էլ արաւ պապաս. իսկոյն գնաց ոսկերիչ Մելքօնի մօտ, մէկ հաստլիկ, վրան կնիքով մատանիք առաւ, յետոյ գնաց դեղավաճառ Սարգիսից մէկ պստիկ-սաղմոս գնեց,—հետն էլ պարծեցաւ մամայիս պէս, մէկի վրա տասը աւելացնելով, և տուն բերեց։ «Ահա քեզ պստիկ-սաղմոս, ասաւ, բայց շան երես, տես, շուտ չը պրծնես, թէ չէ՝ փողս գրքիդ հերիք կանի՞», ասաւ, հանաք անելով։ Իսկոյն գիրքը ձեռքս առայ, բաց արի և սկսեցի ինձ համար կըմկըմալով կարդալ։ Սկզբում մի քիչ դժուար երևացին վանկ-վանկ չը գրած խօսքերը. բայց կարդալով, կարդալով, բաւականին ընտելացայ ու մինչև կերակուրի պատրաստ լինելը՝ գիրքը ձեռքիցս վայր չը դրի։

Կէսօրից յետոյ որ վարպետիս մօտ գնացի, փքւած հպարտ-հպարտ վարպետիս ժառեցայ, էն արծաթէ մատանին ձեռքը տուի, «պապաս բարև

արաւ, ասի, էս քեզ դրկեց, բարի վայելես։ Էս պստիկ սաղմոսն էլ ինձ համար առաւ» ասի.—Շէն կենայ, ասաւ վարպետս ու մատանին մատին հագաւ ու ինձ էլ նոր առած գրքից դաս տուաւ, «էս մի քիչ դժուար կըլինի, ասաւ, բայց որ աշխատես, կամաց-կամաց կը վարժուես»։

Գնացի, տեղս նստեցի ու սկսեցի կարդալ. չորս անգամ որ ետևից կարդացի դասս, համարեա թէ բերան սովորեցի։ Եկայ վարպետիս առջև, էն տէրտէրի նման ձայնով որ «երանեալից» կարդացի, մարդը բոլորովին ապուշ կտրուեց, բերանը բաց մնաց։ Երկու դաս որ էլի պատասխանեցի, «հերիք է, ասաւ վարպետս, հիմա թուղթ առ, ծալիր, տեարակ կարիր, բեր ինձ, քեզ համար տողեմ, օրինակ էլ տամ որ գրես»։ Էնպէս էլ արի։ Բայց գրածս կարդալուս պէս շնորքով չէր, ղ, ղ, շ, չ, ռ, ս, խիստ չարչարեցին ինձ. օրինակին որ նայում էի, կարծես հեշտ կերևային, բայց երբ գրիչը ձեռքս առայ ու սկսեցի գրել, մատիս տակից ուրիշ տեսակ բաներ էին դուրս գալիս, օրինակին իսկի չէին նմանում։ Մէկ էլ էս, որ առաջին անգամից իսկի չէի կարողանում տողի վրա ուղիղ գրեմ. կամ գրիչս էր դէպի վեր գնում, գրերս վերևի տողերին էին կպչում, կամ էնպէս ցած էր գնում, որ ներքևի տողին էին հասնում։ Զօռով-մօռով մէկ երես բան գրեցի հայ-հայ երեկոյեան զանգի ժամանակները,

տետրակիս երեսին հինգ-վեց տեղ թանաք էր թափել, տեղտեղ էլ գրածիս վրա երեսի քրտինքը կաթել էր, թանաքը փուել էր, ուրիշ տեղ էլ թաց-թաց գրածս թևովս փչացրել էի. վերջապէս ջնջոցի պէս մէկ կեղտոտ բան տարի ցոյց տուի վարպետիս։ Գրածս տեսաւ թէ չէ, վարպետս կարծես ուրախացաւ։ «Ապա, ջանս, ասաւ, դու կարծում էիր թէ գրել-կարդալը հեշտ բան է. Չէ, բալաս, էտ հեշտ, շուտով վերջացնելու բան չէ. մենք մինչև էս տեղը հասել ենք, գիտես՝ ինչեր ենք քաշել։ Տղան մինչև մէկ դոյլ (վեդրո) թանաք չը վիթի ու երեսուն դաստա թուղթ չը փչացնի, լաւ գրել կը սովորի։ Գրելը կարդալու պէս հեշտ չը գիտենաս. կարդալը ինչ բան է որ, նրանից էլ հեշտ բան կայ որ, բօռ պառաւ ու քաւթառ նանին էլ լաւ վարպետի մօտ որ տաս, կարդալ կը սովորի։ Շնորհքը գրելն է»։

Տղաներն այնպէս բարձր-բարձր ծիծաղեցին, որ ամօթից աչքս մութ կոխեց, սիրտս լցւեց, կըցեցի հեկեկալով լաց լինել։ «Հածէ, ինչու ես լաց լինում, ասաւ վարպետս, ուշ, մեծսիրտ տղայ ես եղել։ Էտպէս հպարտ եղածդ չը գիտէի։ Ես քեզ մէկ խոնարհ տղայ գիտէի, մի ասիլ որ փորիդ մէջ չար սատանայ ես ունեցել... Հածէ յիմար, դու ե՞րբ ես լսել, որ մէկ տղայ առաջին անգամից, գրիչը ձեռքը առած չառած պարզ գրի։ Էտ դու կարծում ես թէ քերականը

որ լըպըռ լըպըռ կարդացիր պրծար, ամեն բան էլ էտպէս շուտով պիտի սկսես ու վերջացնես։ Չէ, ջանս, գրել-կարդալը էտքան հեշտ բան չէ։ Հեշտ բան ուզում ես—դնա գետինը փորիր, ջուր կրիր, ժամի դռանը մուրա—շատ, քեզ հեշտ արհեստ, իսկ գրել-կարդալը հեշտ արհեստ չէ։ Դու շատ քիթ վեր չը քաշես, որ պստլիկ քերականը շուտով վերջացրիր։ Քերականը ինչ հօրս ցաւն է որ, էն դեռ գրել կարդալուն առաջի երեսն է։ Մէկ տեսնենք պստիկ սաղմոսն էլ վերջացրու՝ մեծ-սաղմոսը սկսիր, մեծ-սաղմոսը վերջացրու՝ ժամագիրքը սկսիր. էն էլ որ վերջացնես՝ աւետարանը ձեռքդ առ, էն էլ վերջացրիր՝ Նարեկը կարդա, էն էլ կարդացիր՝ յետոյ Զամչեան կայ, Զամչեանին յետոյ տրամաբանութիւն կայ, տրամաբանութիւնից յետոյ՝ ճարտասանութիւն կայ կարդալու, էն էլ կարդացիր... որ մէկն ասեմ, նրանց տեղը շատ... Ապա, պարոնս, դու ինչ գիտէիր»...

Տղաները նորից վրաս ծիծաղեցին. ես նորից քեստ ընկայ։

Մինչև էս օրս հասկացած չեմ, ինչու էտպիսի խօսքեր ասաւ վարպետս։ Հոգիս վկայում էր որ ես վատ, անպիտան, անպէտք աշակերտ չէի, էտ կծու խօսքերին արժանի չէի։ Էն էլ լաւ գիտէի որ ընկերներս որը միւսներին նայելով, որն էլ նախանձից էին

ծիծաղում վրաս, բայց վարպետիս էսպէս հե-
տոս ժաժ եկածը չը հաւանեցի, դժուարս եկաւ։
Իսկ նա չը գիտէր թէ ես իրեն ինչպէս սիրել
էի, էս սուրբ ժամը վկայ որ—ասաւ մատովը
Լուսաւորչի գանգակատունը ցոյց տալով—պա-
պայիդ մամայիդ մեռցրու՝ ասէր, կը մեռցնէի,
էնչափ սիրել էի էտ անպիտան մարդուն։ Քեզ
ինչ ասեմ. էտ մարդը առաջին եկած օրս, ա-
ռանց պատճառի առնէր վար կախէր ինձ,
ոտքիս ֆալախա զարնէր—էնչափ սիրտս ցաւե-
ցրած չէր լինի, ինչպէս որ էտ խօսքերովը...
Դու ինչ կասես, հայ-հայ յիսուսնուհինդ տարի
կը լինի, դեռ մտքիցս ելած չէ... Մէկ մէկ ժա-
մանակ միտք եմ անում՝ չը լինի թէ նա-
խանձ էր... միւս կողմից էս էլ կասեմ՝ դեռ
ինչս էր տեսել, որ նախանձուէր... Սուտ
չէ, զորթ է, երկու օրւայ մէջ ես էն արի,
ինչ որ գուցէ ուրիշները երկու տարւայ մէջ
չէին անի, բայց ինչպէս որ վարպետն ինքն էլ
իր բերանով ասաւ, իմ արածս դեռ գրել-կար-
դալու առաջին երեսն էր, էնտեղ գուցէ դեռ
հազար երեսներ մնացել էին՝ մէկ մէկուց դժ-
ւար...

Էտ չար բոպէին եմ և վարպետիս միջից
սև կատու անցաւ. հոգիս զգաց որ կամ ես էտ
մարդու գլխին մէկ խաթա պիտի բերեմ, կամ
նա իմ գլխիս... Ա՜խ, հայ վա՜խ, ինչու էն երե-

կոյեան, տուն որ գնացի, էտ ամեն բանը տե-
ղով-տեղով հօրս մօրս չասի, որ նրանք էլ քա-
շէին, առնէին ինձ նրանից ու մէկ ուրիշ վար-
պետի տային։... Բայց սուս կեցայ, մարդու
բան չասի, դարդս սրտիս մէջ խորունկ թաղեցի,
հետն էլ թաղեցի իմ բաղդս ու ջահել արևս...

Մի կտոր ժամանակից պստիկ-սաղմոսն էլ
վերջացրի. պապաս մեծ սաղմոս առաւ, մէկ
ամսից էն էլ պրծայ, ձեռքս ժամագիրքը առայ
կարդալու, երկու-երեք ամսից ժամագիրքն էլ
պրծայ՝ աւետարանը սկսեցի։ Էտ միջոցին գիրս
էլ կամաց-կամաց կարգի ընկաւ, էնպէս որ եթէ
իմ ու վարպետիս ձեռք կողքէ կողք չը դնէիր
և մէկ լաւ չընայէիր, գուցէ շատ տարբերու-
թիւնն էլ չը նկատէիր։

Անցաւ էսպէս մէկ տարի։ Ես արդէն նա-
րեկն էլ պրծել էի, Զամչեանի քերականութիւնը
սկսել էի։ Վարպետս միջից տեղ-տեղ կարդալ
կը տար, ինչպէս որ սաղմոսն ու աւետարանը,
տեղ-տեղ էլ բերան սերտել կը տար, բայց իս-
կի խելքս չէր պառկում թէ դա ինչ տեսակ
բան է... Խօսքի վրա՝ ինչ ասել է՝ «փառ, փառի,
լ փառէ, զփառ», ինչ ասել է էտ, դրա բուն միտքն
ինչ է, ինչ է ուզում ասել, ինչ է ուզում
հասկացնել, ինչ է ուզում սովորեցնել, այսինքն՝
ուզում եմ ասել թէ՝ դրա օգուտն ինչ է։ Էլի
սաղմոսը, ժամագիրքը, աւետարանը կարդալիս

գիտէի որ աղօթք են. ես էլ որ չը հասկանամ, միտք էի անում, Աստուած կը հասկանայ հօ և Իրեն տուած փառաբանութիւններս ընդունելի կը լինեն հօ։ Բայց այդ Զամչեանի միջի «փառ, փառի, զփառէն» իսկի բան չը հասկացայ —հիմա էլ չեմ հասկանում, գուցէ էնպէս էլ չը հասկացած պիտի մեռնեմ։ Ինքս ինձ միտք եմ անում. «կամ էտ մէկ անպէտք դատարկ բան է, դրանցից մարդուն ոչ մի օգուտ չը կայ, կամ դրա միտքը վարպետս ինքն էլ չը գիտի»։

Մէկ օր, ինչպէս կը լինի որ վեր եմ կենում վարպետիս ասում. «վարպետ, էտ քերականութիւնից, ասում եմ, մարդ ինչ է սովորում», ասում եմ։ «Էտ քո խելքի բանը չէ, ասում է, երբ կը մեծանաս, ասում է, էն ժամանակ կիմանաս» ասում է։—«Թէ որ—ես էլ դառնում եմ իրեն ասում—թէ որ մեծանալուցս յետոյ պիտի հասկանամ, ասում եմ, աւելի լաւ էն չէ՞ որ, ասում եմ, թող դեռ մեծանամ և յետոյ սովորեմ. չը հասկացած բանը սովորելը ինչ շահ», ասում եմ։—Էստեղ արի, էստեղ։ Մօտն եմ գնում։—Զեռքիդ ափը բաց արա՛, ասում է։ Վախենալով, բայց էլի բաց եմ անում ափս... Մէկ կը խփի էն ճիպոտով, մէկ էլ կը խփի, մէկ էլ կը խփի. «շատ՝ քեզ քերականութեան մեկնութիւնն ու օգուտը. հիմա հասկա-

ցա՞ր։ Գնա՛, տեղդ նի՛ստ և մէկ էլ խելքիդ կըտրած չը կտրածը դուրս չը տաս»...

Ափս գնդակի պէս ուռեց. կապոյտ հետքերը չորս-հինգ ամսից հազիւ անցան, շաբաթներով չէ՞ թէ գրել, մէկ ասեղ էլ չէի կարող վերցնել —էնպէս կսկիծում էր ձեռիս ամեն մի պճեղը։ Էլի սուս կեցայ, պապայիս մայրիս բան չասի։ Հարցրին՝ «ինչու ձեռդ ուռել է», ասի թէ՝ վարպետիցս ետ գալու ժամանակ ոտքս քարին դէմ ընկաւ, սայլի ճանապարհի վրա գլորուեցի, էտ միջոցին մէկ սայլ մատերիս վրայով անցաւ։»

Կէս տարուց մեծ քերականութիւնն էլ ծայրէ ծայր վերջացրի, հերթն հասաւ տրամաբանութեանը. բայց էտ գիրքը դեղավաճառի մօտ չը գտնուեց, եղած չեղածը քաղաքի մէջ մէկ հատիկը կար, էն էլ Օ... օղլուի մօտ էր։ Կամայ ակամայ պիտի Ստամբոլից ապսպրուէր։ Մինչև որ գիր գրեցինք, փողը ղրկեցինք, մինչև որ էտ տրամաբանութիւնը ձեռներս հասաւ, անցաւ կէս տարի։ Էտ միջոցին ես մէկ անգամ էլ ծայրէ ծայր քաղուածք արի Զամչեանի քերականութիւնը։

Ես գիտէի թէ տրամաբանութիւնը որ գայ, էտ անօգուտ «փառ, փառի, փառիս, փերեալ եմ, փերեալ ես, փերեալ է» դերբայ, կոչական, ածական, իգական՝-ից կազատուեմ։ Բայց երբ տրամաբանութիւնը ձեռքս առայ ու սկսեցի

երես երեսի եռեից, երես-երեսի եռեից բերան սերտել, էն ժամանակ տեղով հասկացայ որ գրել-կարդալը հեշտ արհեստ չէ եղել ու մէկ-երկու տարուայ մէջ չի վերջացուի։ Դժուարը էն չէր, որ օրը կամ երկու երեք երես բան բերան անէի, էտ դատարկ բան է. էն ժամանակ էնպէս սուր միտք ունէի, որ աւետարանից կամ Աստուածաշնչից գլուխ-գլուխ բերան սերտելը ինձ համար մի գաւաթ ջուր խմելու պէս մէկ բան էր։ Դժուարն էն էր որ բերանը կը բբլբլար, գլուխս չէր մտնում, չէի հասկանում—հիմա էլ էտպէս է հօ—բայց էն ժամանակները մէջս ուրիշ կրակ կար, մէկ անկշտում ծարաւ կար նոր-նոր բաներ իմանալու, ամեն բանի արմատը, իսկը գիտենալու, խօսքի վրայ՝ ինչու մեր ձմեռը բուք ու սառնամանիք է, իսկ Երուսաղեմում—մղդեսիների ասելով—իսկի ձմեռ չը կայ. ինչու մեր տեղը ամառը տաք է, իսկ Սիբիրի կողմերը, դեռ էն կողմերն էլ, ասում են թէ՝ ամառ բոլորովին չի լինում, տարիտասնեւերկու ամիս ձմեռ ուբուք է, ինչու գարնանը կռունկները, վայրենի սագերը, արագիլները հարաւից դէպի հիւսիս են գնում, ինչու աշնանը էլի նորից ետ են դառնում. ինչու ծովի ջուրը աղի է, ինչից է գոյանում փայլակն ու կայծակը, ձիւնը, անձրևը ու կարկուտը. ղորթ է էտ ծեր մարդկանց ասած է թէ ամպը

Եղիա մարգարէի սայլի ակերից է գոռում, ինչպէս են ապում գիրքը, ինչպէս են գործում արչան, մախմուրը, ինչպէս և ինչից են շինում էս մեր պատուհանների ապակին... հարցնելու, իմանալու, սովորելու բան շատ, որ մէկը ասեմ... Բայց ուրից իմանայի, ումը հարցնէի, ինչ հնարով սովորէի... Երևի, ինքս ինձ միտք կանէի, կայ էնպիսի մարդ, որ էտ ամենը գիտի, կայ էնպիսի գիրք, որտեղ էս ամենը գրուած է, բայց որտեղ գտնեմ էտ մարդուն, ուր է էտ գիրքը, ծովի որ անդունդից հանեմ... Մէկ էլ՝ որ գիրքը գտնէի ինչ օգուտ, որ հասկանալու չեմ, որովհետև էնքան գիրք որ համարեա թէ ամենն էլ բերան սերտեցի, ինչպէս կասեն հում հում կերայ ու միջից բան չը հասկացայ, էն գրքից էլ ինչ պիտի հասկանամ... Կա՞յ արդեօք աշխարքիս երեսին էնպիսի մարդ, որ կարողանար ինձ գիրք հասկանալ սովորեցնել... Թէ՞ ամենքն էլ ինձ պէս գիրքը չը հասկացած բերան սովորել են և յետոյ անունները իմաստուն, վարդապետ, տիրացու, վարժապետ է եղել։

Էնպիսի մտածմունքների մէջ էի գիշեր ցերեկ... Հալւում էի, մաշւում էի... չորս կողմս մէկ խելօք մարդ չը կար, որ սրտիս դարդը առջևը վիթէի, որ էս կասկածները կամ հանէր մտքիցս, կամ մէկ ուրիշ ճար ցոյց տար։

Առաւօտեան անկողնից վեր կը կենայի, մամայիս կը տեսնէի, երեկոյեան աչքիս առջև միշտ պապաս էր. էտ ողորմելիներից ինչ պիտի հարցնէի, ինչ պիտի սովորէի։ Մամաս—Աստուած ողորմի հոգուն—սիրտս շահել որ ուզենար, կառնէր ձեռքով փախլաւա, խուռապիա, տեսակ-տեսակ հալւաներ կեփէր, կը դնէր առջևս, կարծում էր թէ դրանով ինձ մեծ բախտի հասցրեց. էն էլ ասենք՝ խեղճի ձեռքից աւելի ինչ կը գար։ Պապաս էլ—Աստուած հոգին լուսաւորէ—բերանից կը կտրէր ու ինձ համար գրքի, թղթի, դրչի փող չէր խնայի—խեղճ մարդու վաստակածը քանի՞ կոպէկ էր որ—նա էլ կարծում էր թէ դրանից աւելի որդի սիրել չի կարելի. յետոյ երկուսն էլ զարմանում էին թէ ինչու ես ժամանակ-ժամանակ սրտիս նեղութիւնից հայ-հայ միսս եմ ուտում...

Էսպիսով կէս տարի էլ անցաւ։

Գարնան ժամանակներն էր։ Մէկ օր առաւօտեան վաղ վարժատուն գնացի։ Վարպետը պարտէզում փոս էր փորում, հէնց էնտեղ, որտեղ որ բանւորդ էս բոպէիս փորում էր, և ուզում էր մի ազնիւ ծիրանի ծառ տնկել, նրա կնիկն էլ պատի մօտ մաղդանոս, տարխուն ու տեսակ տեսակ ուտելու կանաչեղէն էր ուրոնում։ Մօտեցայ ու «վարպետ, ասի, յոգնել ես, ինձ տուր բահը, քիչ էլ ես փորեմ։»—Առ,

ասաւ, տուաւ ինձ բահը ու ինքը գնաց շուշանների, կակաչների, սմբուլների վրայի հողը շուռ ու մուռ տալու, որ չահել տերևները դուրս գան։ Է՛տ միջոցին հարևանի դռնակից մի կինամարդ գլուխը ներս խօթեց «հաքա, Անուշ, էստեղ ես», հարցրեց։—Հա, էստեղ եմ, ասաւ եանկան (տանտիկինը)։ «Էստեղ արի մէկ բոպէ, բան պիտի ասեմ», ասաւ հարևանի կնիկը։—Գալիս եմ, գալիս, ասաւ եանկան ու շտապով բերեց դաբախով կանաչեղէնը, վրան էլ մէկ սիրուն, ճերմակ ոսկորէ կոթով դանակ ու դրեց փոսի ափին ու ասաւ ինձ. «փոսը որ փորես պրծնես, էտ դաբախը խոհանոց կը տանես,» ասաւ ու շտապով վազեց դէպի դռնակը։ «Էս ինչ սիրուն դանակ է», ասի ու էլի եմ բանս եմ շարունակում։ Փոսը փորեցի պրծայ, բահը դրի փոսի ափին ու ինքս գնացի սենեակը դասս սերտելու. մտքիցս բոլորովին ելաւ կանաչեղէնով դաբախը խոհանոց տանելը։

Անց է կենում ժամ ժամուկէս։ Մէկէլ տեսնեմ եանկան, լեղին պատռած, ներս է մտնում։ «Հածէ՛ Մարտիրոս, ասում է, դաբախը խոհանոց չը տարաՀ,» ասում է։—Չէ, եանկա, ասում եմ, մտքիցս ելաւ, ասում եմ, էս բոպէիս կը բերեմ»։ Գնում եմ դաբախը առնում ու տանում տալիս եանկային։ «Զախուն ապա որտեղ է», ասում է։ Այն ժամանակ մե-

նակ նկատում եմ, որ դանակը չը կայ։ Վազելով գնում եմ պարտէզ, փոսի մէջ եմ նայում բերանի հողն եմ շուռ ու մուռ տալիս, քրքրում, անցած ճանապարհս եմ տնդղում, դէս ու դէն եմ ընկնում—դանակը չը կայ։ Գալիս եմ եանկայիս մօտ, էսպէս էսպէս բան է, ասում եմ, դանակը կորել է, ասում եմ։—Ի՞, ասում է, իսկի էտպիսի բան կը լինի՞, ասում է. իսկի լոյս ցերեկով ահագին դանակը կը կորչի՞, ասում է. քորոց է, կեռիկ է ինչ։ Շուտով գնա գտիր, թէ չէ գլխիդ էնպիսի բան կը բերեմ, որ մինչև սև հող մտնելդ չը մոռանաս,—ասաւ էլ, արաւ էլ անօրէն անհաւատ կինամարդը։

Մէկ էլ գնացի պարտէզ, ամեն ծած ու ծուկ փնտռեցի, ամեն քարի, տերևի, ճիւղի տակ նայեցի, չը կայ, չը կայ ու չը կայ էտ դանակը, ոտով գլխով կորաւ, զեռին մտաւ։ Նորից գնացի խոհանոց. «եանկա, ասի, ամբողջ պարտէզը քրքրեցի, տեղ չը մնաց, որ չը նայէի, յոգնեցի, բայց դանակը չը գտայ... Ինչ ուզում ես արա»...—Թէ դու չը գտար, ես կը գտնեմ, ասաւ ու էնպէս խոժոռ աչքով նայեց վրաս, որ կարծես կանգնած տեղս հում-հում ուտել էր ուզում ինձ։ «Էյ գտիր, տեսնեմ՝ ինչպէս ես գտնում» ասի սիրտս ելած։ Ասի ու դուրս եկայ խոհանոցից։

Կատաղած երեսով վազեց կինամարդը վարպետիս մօտ։ Ի՞նչ խօսեցին, չը գիտեմ։ Վարպետը մնաց սենեակում, կնիկն էլ խոհանոց գնաց։ Երկու-երեք բոպէից երկու աշակերտ դդակները առան, փողոցի դռնից դուրս գնացին (ես դեռ բակում կանգնած եմ)։ Երբ որ երեխաները փողոց գնացին, ես էլ մտայ ներս ու տեղս նստեցի, սիրտս էլ էնպէս վատ է, էնպէս վատ է, որ կարծես մահս եկել է. էս է կը մարեմ, սիրտս կանցնի։ Ընկերներից մէկը կամաց ինձ ասաւ, որ վարպետս պապայիս ետևից ղրկեց էն երկու տղաներին։ Վախենում եմ, բայց չեմ երևցնում։

Կէս ժամ չանցած տղաները վերադարձան, պապաս էլ նրանց ետևից ներս մտաւ։ Վարպետս տեղից վեր կացաւ։

«Ես քեզ ձայն էի տալ, ասաւ, որ որդուդ վատ, անազնիւ բնաւորութիւնը աչքովդ տեսնես ու հասկանաս։ Էս յանդուգնին, էս անպիտանին—մատով վրաս ցոյց տուաւ—ինչքան կարողացայ սովորեցրի, Աստծու առջև կարող եմ ասել որ ոչ մէկ աշակերտին էնպէս սրտով կըպած չեմ եղել, ինչպէս էս լիրը շանը։ Իսկի սուտ ասած չեմ լինի, եթէ ասեմ թէ իմ հարազատ որդուս պէս երախտիք ունեցել եմ վրան... Բայց էսքան տարուայ տանջանքիս փոխարէն որդիդ, էս հարամ-սատկելու տղադ ինչով վճարեց... Ականջդ բաց արա ու մէկ լաւ

լսիր։ Մէկ որ էս անդգամը ինձ չէ հաւանում, ինձ խենթ, բան չիմացող, իրանից ստոր, անճար մարդ է համարում. ղորթ է, բերանով չէ ասում, բայց նշանով, աչքով ցոյց է տալիս, էտ ես նրա ժաժմունքից եմ նկատում։ Մէկ էլ աշակերտներիս սիրտը ինձնից սառեցնում է. «ինչ է մեր վարպետը, ոչ մի բան չը գիտի ինքը, ինչ է իր գլխին մէկ խումբ աշակերտ հաւաքել»։ Էսպիսի բաներ. էտ էլ ես վրայից, ժաժմունքից, բիթուպռունգից նկատում եմ— չը կարծես թէ ականջովս լսել եմ, չէ,—սիրտս զգում է որ էտպէս պիտի լինի։ Ղորթ է, ապացոյց բերել չեմ կարող—մեղքը ինչ առնեմ— ինքս չեմ լսել, մարդ էլ չէ ասել, բայց գիտես՝ որ ասածիս մէջ ոչ մի սուտ չը կայ։ Վրա երեքն էլ էս, որ որդիդ գող-աւազակին մէկն է. էտ արդէն կարող եմ ապացուցել։ Էսօր առաւօտ որդիդ խիստ վաղ վարժատուն է գալիս, երբ որ հաստատ գիտի որ էտ ժամանակ աշակերտները դեռ հաւաքւած չը պիտի լինեն։ Ի՞նչ է դրա պատճառը, մտքում վատ բան չունէր, ով գիտի՝ ինչեր է միտքը դրել անելու. իմ քնած ժամանակը տանս մտնել ուզեցել է, ինձ կամ կնկանս դեղ տալ ուզեցել է, ես ինչ գիտենամ, ախպէր. Աստուած չեմ որ սիրտը մըտնեմ, մէջն եղածը տեսնեմ—թէ ադամորդու սիրտը թէ ծովի անդունդը, երկուսն էլ մեզ համար մութ են. էս մէկ։ Ես ինձ համար փոս էի փորում։ Որդիդ մօտ եկաւ, աչքիս լաւ մարդ երևալու համար՝ «տուր, ասում է, վարպետ, բահը դ ինձ, դու յոգնել ես, ես փորեմ»։ Դրան ով էր ասել՝ Աստուած կը սիրես, արի ինձ օգնիր։ Համարեա քսան տարի վարժապետութիւն եմ անում, էտ քսան տարուայ մէջ քչից-քչից ձեռքիս տակից վեց հարիւր երեխայ է անցել, իսկի մէկ անգամ եղած չէ որ աշակերտներիցս մէկը գար ու ասէր. «Վարպետ, բահդ տուր, փոս փորեմ»։ Ի՞նչպէս է որ հէնց Մարտիրոսն է ասում ինձ էտ խօսքը։ Եթէ արածը լաւութիւն էր, էտ վեց հարիւր աշակերտներիցս ոչ ոք ինձ լաւութիւն կամեցած չէ՞ ինչ, բոլորն էլ ինձ թշնամի էին, բոլորն էլ անազնիւ, վատ տղաներ էին, իսկ որդիդ նրանց միջից առաջինը եղաւ, որ ասաւ «դու յոգնել ես, արի քեզ օգնեմ»։ Ասել է որ միտքը ծուռ էր. էս երկու։ Նշանածս նրան տալիս է կանաչեղէնով դաբախ ու ասում է՝ «իսկոյն այս դաբախը տար, խոհանոցը դիր»։ Թէ որ որդիդ լաւ մարդ է, մըտքի մէջ վատութիւն չը կար, ինչու իսկոյն չառաւ, չը տարաւ ու ժամերով գցում է գետնի վրայ, ինչու է էտպէս անում։ Մոռացաւ, կասես, բայց Մարտիրոսի սուր միտք ունենալը ես երկու տարուց վեր գիտեմ, էտ ինչպէս է որ ժամագիրք, աւետարան, քերականութիւն,

տրամաբանութիւն ծայրէ ծայր բերան է սովորում՝ չի մոռանում ու մէկ ջուխտ խօսքը մոռանում է. իսկի հաւատալ կարելի՞ է էտ բանին... Ասել է՝ որ «մոռացայ» ասածը սուտ է, էտ մէկ դատարկ պատրւակ է. նա մոռացած չէ, այլ գիտմամբ էտպէս արել է, մտքի մէջ վատութիւն ունեցել է։ Էս քեզ երեք։ Վերջի վերջոյ նշանածիս պապայիս Ինացած թանկագին ինգլիզի չախուն (անգլիական դանակը), որը երկուսս էլ աչքերիս լոյսի պէս սիրում էինք, դաբախի վրայից գողանում է, ով գիտի որտեղ է թագցնում ու մեզ ասում է թէ կորաւ, իսկի էտպիսի բան կը լինի, ախպէր... աշկարայ բան է որ որդիդ վաղուց ժոքում դրել է էտ դանակը գողանալ, բայց առիթ ունեցած չէ, էսօր որ առիթը պատահել է, էլ ձեռքից բաց չէ թողել։ Երբոր որդիդ գողանալու միտք ունեցած չէ, ապա ի՞նչու նշանածիս ասել է՝ «էտ ինչ սիրուն դանակ է». երևի հաւանել է որ գովել է, էտ ծծի երեխան էլ գիտի որ գողը իր հաւանած բանը կը գողանայ... Շտէ ասելս էս էր։ Ահա որդիդ, ահա ես, դու եղիր մեր դատաւորը։

Պապաս տեղն ու տեղը սառաւ. երեսը մէկ ձիւնի պէս սպիտակում էր, մէկ կրակի պէս կարմրում էր. հա իմ վրաս էր նայում, հա վարպետիս վրա։ Ի՞նչ անէր խեղճ մարդը. հաւատար՝ մեղաւորը որդին էր, չը հաւատար՝ դանակի կորչելը շատ կասկածաւոր բան էր։

«Հածէ Մարտիրոս, ասաւ ինձ, էս ըոպէին որտեղից ուզում ես դանակը հանիր ու վարպետիդ տուր»։

—Պապա, ասի, չառած բանը ի՞նչպէս տամ, չը պահած բանս ո՞րտեղից գտնեմ։

«Մարտիրոս», կանչեց պապաս էնպիսի սառնական ձայնով, որ քիչ մնաց խելքս կորցնէի։

—Պապա, իսկի մի հաւատալ, բոլորը սուտ է։ Ես գող չեմ, մի հաւատալ, ես չեմ գողացել։ Վարպետս իմ վրայ չիգը ունի, երկու տարի է։ Համարեա վարժարան մտնելու օրից ինձ վատութիւն է ուզում, բայց որ սիրտդ չը կոտրի, քեզ բան չէի ասում։ Մի հաւատալ էտ մարդուն։ Զը գիտեմ՝ ի՞նչ է եղել դանակը, գուցէ մէկը ծածուկ պարտէզ ժոել է գողացել, գուցէ ագռաւը ոսկոր կարծել թռցրել է, ես ի՞նչ գիտեմ, բայց կուրանամ, կոյր մանգամ որ ես առած չեմ... Պապա, վարպետս քեզ յիմարացնում է, նրա միտքը դանակը չէ, այլ դանակի պատրւակով իր հին չիգը ինձնից հանել է ուզում։

Էսպիսի շատ բաներ ասի, բայց ո՞ւմը կասես. պապայիս աչքը մութ էր կոխել, խօսքը ականջը չէր մտնում, նա էլի մէկ բերան «հանիր դանակն» էր ասում։

Վերջը վերջը ես էլ վերկացայ ու՝ «պապա, ասի, քեզ մէկ բան ասեմ, ասի. ես տեսնում եմ որ էսօր մահս եկել է. ինչ կուզես, ես պատրաստ եմ»։

«Մարտիրոս, կանչեց պապաս, երեք անգամ քեզ կասեմ՝ կը հանեմ դանակը թէ չէ»։

—Դանակը վերցրած չեմ, ասի։

«Դանակը կը հանեմ թէ չէ», ասաւ երկրորդ անգամ։

—Դանակը մօտս չը կայ, ասի ես նորից։

«Վերջին անգամ եմ ասում քեզ, դանակը կը հանեմ թէ չէ»։

—Պապա, ոտքիդ պագնեմ, դանակը չեմ վերցրել, ասի ու պապայիս ոտքերն ընկայ։

«Բերէք ֆալախան», ասաւ պապաս։

Ցայտնի երևում էր որ մարդու խելքը արդէն վրան չէր։

—Վա՜յ մամա, կանչեցի, փրկիր որդուդ, ինձ պէտք է մեռցնեն էսօր։

Երնէկ թէ ղորթ մեռցրած լինէին։

Ֆալախան վաղուց պատրաստ է, երկու ճիպոտ էլ հեռը։

Երեք հատ ուժեղ տղաներ վրաս թափեցին, ինչպէս որ դասաբը կովին, էնպէս էլ նրանք ինձ վայր գլորեցին, կօշիկներս, փաթթոցներս ոտքիցս հանեցին, ֆալախային պարանը ոտքիս ձիգ գլորեցին ու էնպէս բռնած պահեցին, մէկ ճիպոտը պապաս առաւ, մէկէլը վարպետս... էլ միտքս չէ...

Երեք օրից որ ուշքի եմ գալիս, տեսնում եմ որ անկողնիս մէջ պառկած եմ, մամաս ու մեծաս, մէկը մէկ կողմս, մէկէլը մէկէլ կողմս, աչքերը ուռած, կեցել են, երեսս են նայում։ Տեղիցս շարժուել չեմ կարողանում, ամեն ժամ եկածիս՝ կարծես հազար բիզ են խրում ողջ մարմինս։ Ոտք ունեցածս չեմ հասկանում, կարծես կտրել են, դէն են գցել։ Կամաց-կամաց աչքս վրաս եմ հաւաքում ու անցած բաները մէկ-մէկ, մէկ-մէկ միտքս է գալիս։

Մէկ էլ տեսնես միւս սենեակից սասանական մի ձայն է գալիս. չը գիտեմ մարդու է, չը գիտեմ՝ գազանի, ու շղթայի զնգզնգոց։

«Էս ինչ է էս» հարցնում եմ մամայիս։

—Սուս, ասում է, պապադ է, ասում է։

Խեղճ պապաս, խելքը կորցրել էր ու կատաղել էր։

Եօթն ամիս տեղաշորերից չեմ վեր կացել, հինգ ամիս էլ էնպէս տկար եմ լինում, որ պատերից քսքսւելով կամ նստարանները բռնելով զօռով-զօռով ման եմ գալիս սենեակի մէջ։ Էտ միջոցին պապաս էլ մեռնում է—Աստուած գերեզմանը լոյս իջեցնի—երեք հոգի՝ ես, մամաս ու մեծաս մնում ենք որբ ու մէկ կտոր սև հացի կարօտ։ Մամաս լուսէ լուս ժողովրդի

կարն է կարում, մեծաս էլ դալալութիւն անելով, փալ բանալով, մոմ թափելով, չար-աչք աղօթելով՝ կտոր մտոր փող են վաստակում. դրանով շատ գլուխներս ապրեցնում ենք։

Քաղաքի մէջ անունս դանակի գող է դուրս գալիս։

Ես էլ տասն և չորս տարիս եմ մտնում։

Էտհէնց միջոցին աղա Լազարովից էստեղի մէկ աղայի վրա գիր է գալիս թէ՝ «եթէ մէկ էնպիսի գրել-կարդալուն սէր ունեցող աղքատ տղայ կայ էտտեղ, խնդրեմ վերցնես ուղարկես Մոսկով հայի ճեմարան»։ Էս որ լսում եմ՝ իսկոյն գնում եմ էտ աղայի մօտ, ոտներն եմ ընկնում, «արի էտ լաւութիւնը արա ինձ, ասում եմ, համ որբ եմ, համ աղքատ եմ, համ էլ կարդալու սէր ունեմ»—ասում եմ շտէ՝ ինչ որ բերանս գալիս է։ Նա էլ—Աստուած բանը աչոդէ—խօսք է տալիս. «երկու շաբաթից պատրաստ եղիր, ասում է. գնացող որ լինի, հետը կը դնեմ կուղարկեմ։» Ձեռքը պաչում եմ, դուրս եմ գնում, ուրախութիւնից վեր վեր եմ թռչկոտում, բայց մերոնց բան չեմ ասում։ Երեք չորս օրից մի քաղաքային պահապան է գալիս մեր դուռը ծեծում. «Մարտիրոս անունով էսպէս էսպէս աղայ կայ էստեղ», ասում է։—Ես եմ, ասում եմ։ «Հայդա, արի հետս, աղան քեզ կանչում է», ասում է։ Մամաս կարծում

է թէ էլի ով գիտի ինչ փորձանք պիտի գայ գլխիս, խեղճը քիչ է մնում խելքից գրկւի։ «Մի վախենար, մամաս, ասում եմ, ու մի երկու խօսքով ասում եմ բանի եղելութիւնը։—Որ էտպէս է, Աստուածամայրը բախտդ բանայ, բալաս, ասում է ու ճամփայ է գցում. մեծաս էլ շտապով փալն է առնում, որ առաջուց իմանայ թէ ինչ համբաւ պիտի բերեմ։ Գնում ենք աղայի մօտ. մարդու խոժոռացած երեսից հասկանում, որ ասելուն ուրախ բան չը պիտի լինի։

Հածէ, ասում է, դու ինչ երեսով էիր ուզում աղա Լազարովի վարժարանը մտնել. մէկ-երկու դանակ էլ որ էնտեղ գողանաս, էտ հօ բոլորովին կը կեղտոտես նախիջևանցու. մաքուր անունը, ասում է՝ երբ որ պոչդ էտբան կեղտոտած էր, դու ինչպէս համարձակւեցիր գալ ու խնդրրւել ինձ։ Դէհ աչքիցս կորիր, գող-աւազակ, երեսդ չը տեսնեմ»...

Էսպէս իր տնից դուրս կանի մեր աղան։

Լալով-լալով տուն եկայ։ Խեղճ մամաս, աչքը դռանը պահելիս է եղել, թէ որդին ինչ ուրախ բաներ պիտի իրեն բերի ու ծերութիւնը մխիթարի. մեծայիս փալն էլ դուրս է եկել շուտով ճամփայ, շատ փող, աղուհաց ու տեսակ տեսակ բարութիւններ։ Էս որ լսեցին ողորմելի կինարմարդիկը, աւելի մեծ տրտմութեան մէջ ընկան։

Մէկ օր մեծայիս մէկ տուն թեթև թափելու*) ձայն տվին։ Էտ տան տէրը տարեայ մէջ ինը ամիս Ստաւրապոլ էր կենում իր առուտուրի պատճառով, տաներկու տարեկան որդուն էլ հետը առել էր ու էնտեղի թագաւորական վարժատունն էր տուել կարդալու։ Մեծաս վարժարանի անունը որ լսում է, կինարմարդոց ոտքերն է ընկնում թէ էսպէս էսպէս, մի թոռ ունեմ, ասում է, կարդալու շատ սէր ունի, ինքը պստիկ է, բայց մեծ մօրուքով տէրտէրից, վարդապետից աւելի բան գիտի, գովում է մի խօսքով ինձ, էնքան է ասում, էնքան է աղաչում, պաղատում, որ էտ կինամարդկանցից խօսք է առնում, որ ինձ էլ Ստաւրապոլ ղրկեն Մատթէոս աղայի մօտ, որ նա էլ վարժատուն տայ։ Էս որ սարքում է պրծնում, շտապով տուն է գալիս, «աչքդ լոյս, Մարտիրոս, ասում է, չարը խափանեցաւ, բարին կատարեցաւ», ու մէկիկ-մէկիկ պատմում է ինձ, ինչ որ խօսել էր իմ մասին։ Ամենքս էլ ուրախանում ենք։

Բայց օրեր են անցնում՝ բան չը կայ, շաբաթ է անցնում՝ բան չը կայ, վերջը վերջը ամիս է անցնում, էլի բան չը կայ։ Մէկ օր մեծաս վեր է կենում ասում է. «էս ինչ զարմանք բան է էս, ասում է, էսքան ժամանակ մէկ խաբար չի լսւում, ասում է, մոռացել են թէ խաբեցին մեզ, ասում է. էսպիսով բան դուրս չի գալ, վեր կենամ մէկ ինքս գնամ իմանամ. ծանդր կեցած քարի տակից ջուր չի վազիլ» ասում է՝ ու ֆարաջան հագնում է, գլխին թաշկինակ է փաթաթում, փայտը ձեռքն է առնում, տրպտրպալով ուղիղ դէպի Մատթէոս աղայի նըշանածն է գնում։ Իրիկնադէմին ճրագ վառելու ժամանակները ոտները թրևելով, ուրախ երեսով ետ է գալիս։

«Ինչ մագարիչ ես տալու», ասում է ինձ։

—Առաջին տարեայ ռոճիկս ամբողջովին քեզ Երուսաղէմի ճամփի փող, ասում եմ։

«Է՛յ, բալաս, ասում է մեծաս, էն օրը որ գայ, ով գիտի՝ ոսկորներս էլ փթած կը լինեն։ Աւելի լաւ է, էգուցայ բանը տեսնենք։ Ահա քեզ ուրախ խաբար. վաղը չէ մէկէլ օր Մատթէոս-աղային էստեղից երեք սայլ բաղկալի ապրանք պիտի ղրկեն։ Եթէ չես վախենում—որովհետև էն ժամանակները աւազակ չերքէզներից վախ կար—նստիր և գնա. Ծնացածն էլ Աստուած գիտի»։

Ինչպէս որ ասում է, էնպէս էլ անում ենք։

*) Հիւանդութիւն կամ թուլութիւն ունեցողի հին շորի մէջ կիսայրեալ մոմ են բերում եկեղեցուց, հիւանդի գլխի տակն են դնում. միւս օրը ամանի մէջ հալեցնում են և յետոյ թափում ջրով լցած պնակի մէջ՝ երեք անգամ գլխի վրա բռնած, երեք անգամ սրտի, երկու անգամ ծնկների և մէկ անգամ ոտների վրա։ Իբր թէ սրանով հիւանդը բժշկւում է։ Ծ. Թ.

Մեծաս դռնէդուռ է ման գալիս, մէկից հին մուշտակ է խնդրում, միւսից տաք մէսթ*) է մուրում, մէկ ուրիշից էլ մորթէ գդակ է առնում. փաթաթւում եմ, կապկպւում եմ, մէկ պստիկ բօխչա՝ ինչ ասես շորերով, ճամփի պաշարով, կռան տակս եմ դնում, գնում եմ սայլն եմ նստում ու ճամփայ ընկնում։

Ինն օրից Ստաւրապոլ ենք հասնում։ Գընում եմ էտ Մատթէոս-աղայի մօտ, գլխիս եկած ամեն բանը պատմում եմ, որ ասես մէկ բան չեմ թագցնում՝ լաւս էլ եմ ասում, վատս էլ ասում։ Բայց տեսնում եմ որ մարդու երեսը մէկ տեսակ է լինում, երևում է որ պատմածիս չի հաւանում, կարծես դժւարանում է, բայց—էլի շէն կենայ—բան չի ասում։

Մէկէլ օրը ինձ վերցնում է, տանում է մեծաւորի մօտ և խնդրւում է որ վարժատուն առնի։

«Գլխագիր ունեմ», հարցնում է ինձ մեծաւորը։ Հանում եմ ծոցից. իրան եմ տալիս։

«Տասն և չորս տարեկան ես», հարցնում է։

—Հա, ասում եմ։

«Ռուսերէն գիտես», ասում է։

—Չէ, սովորած չեմ, ասում եմ։

«Թւաբանութիւն գիտես», ասում է։

—Չէ, սովորած չեմ, ասում եմ։

*) Փափուկ կաշէ (սափիանէ) գուլպայ։ Ծ. Թ.

Էլի մի քանի չը սովորած բաներս է հարցնում։ Որը հասկանում եմ, որը չէ։ Մեծաւորը քիթուպռունգը ցած է թողնում։ Մատթէոս-աղան կարմրում է։

«Օրէնքով վարժատուն առնել չէր կարելի քեզ, բայց ասում է, Մատւէյ Կարպիչին խաթեր համար կամայ-ակամայ պէտք է յարգեմ, ասում է մեծաւորը, բայց ամենատորին դասարանը պէտք է քեզ նստեցնեմ», ասում է։ Ուրախութիւնից չը գիտեմ՝ ինչ անեմ. մեր աղաթով գնում եմ մեծաւորի ձեռքն եմ պաչում. մարդուն դուր է գալիս։

«Վրայից երևում է որ մաքուր սրտով աղայ է, ընաւորութիւնն էլ դեռ փչացած չէ», ասում է Մատթէոս-աղային, վրաս աչքով նշան անելով։ «Կաշխատես, լաւ կը սովորես»։ հարցնում է ինձ։

—Սովորելու որ չը լինէի, ինչու վայրենի դաշտերը կընկնէի, կը գայի էստեղ, ասում եմ։

Ծիծաղեց մարդը. մի քիչ էլ ճնացինք ու վեր կացանք տուն եկանք։

Ճամփին Մատթէոս աղան դառնում է ինձ և ասում.

«Հածէ, գլուխդ գովում էիր թէ շատ բան գիտես. տեղն որ եկաւ ինչու պոչդ քաշեցիր, ինձ էլ ամօթով թողիր»։

Ես բան չասի, սուս կեցայ։ Ախպէր, ինչ

ասէի. իմ տարիներով սովորածս էստեղ բանի պէտք չէկաւ, դրանց սովորեցրածն էլ ես սովորած չէի։ Տեսայ որ Մատթէոս-աղան առաջին օրից վատ աչքով նայեց ինձ, բայց բան չասաւ, էն էլ շնորհակալ եմ։

Մէկէլ օրը առաւօտեան վաղ գնացի վարժատուն, մինչև կէսօր մնացի. երկու վարժապետ եկան, երկուսն էլ դաս տւին. կէսօրից յետոյ մէկ էլ գնացի, էլի երկու ուրիշ վարժապետ եկան, նրանք էլ դասեր տւին։ Միւս օրը բացի նրանցից, էլի չորս ուրիշ վարժապետներ եկան, ամենքն էլ ուրիշ-ուրիշ դասեր տւին, գնացին։ Գիրք չունէի, ինչ անէի, ումն ասէի, ումից աղաչէի առնէի։ Եթէ Մատթէոս աղային ասէի թէ ինձ ութը գիրք է պէտք, հազիւ թէ առնէր տար, որովհետև վրայից երևում էր, որ ինձ տաք աչքով չէր նայում, էնքան էր որ մէկ փոր հաց խնայելու քաշւում էր։ Նրա որդուց ուզէի, էն էլ գիտեմ որ խօսքս զուր պիտի անցնէր, քանի որ նա առանց իմ ասելուն էլ գիտէր գիրք չունեցածս, բայց մէկ բերան խօսք չասաւ թէ՝ ինչի վրա դասերդ պիտի սովորես. երևում էր որ նրան էլ դուր չէր գալիս վարժատուն մտածս։

Դասատան մէջ մի քանի բարի երեսով տղաներ նկատել էի, հարցնելով-հարցնելով գնացի գտայ նրանց տունը, ամենքից էլ մէկ-

մէկ կամ երկու-երկու գիրք վերցրի, եկայ տուն, քաշւեցի մի անկիւն և սկսեցի ինձ ու ինձ սովորել։ Միտքս, փառք Աստծու, սուր էր. էտ կողմից միամիտ էի. դասերս էլ որը վեց տող էր, որը ութը տող—էտ ինձ համար մի բան չէր. թւաբանութեան վարժապետը ոչինչ տւած չէր, նրանը՝ սև տախտակի վրա տեսակ-տեսակ հաշիւներ էին, էտ ոչինչ. դեռ դասարանից դուրս չեկած գիտէի։

Մէկէլ օրը, երբ վարժատուն գնացի և հերթը ինձ հասաւ, դասերս էնպէս լաւ պատասխանեցի, որ վարժապետներս զարմացած մնացին, իրենց ձեռքի թղթի մէջ անունս ու ազգանունս գրեցին և գովեցին—էտ թղթի անունը մէկ տեսակ էր, բայց վաղուցայ բան է, մոռացել եմ՝ գնացել է։—Մեծաւորը եկաւ, էտ թուղթը աչքի անցրեց, «մալադեց Սրվաճիով, ասաւ, աշխատիր, ասաւ, մէկ օր մարդ կը լինես», ասաւ։

Երեսից երևում էր որ լաւ մարդ էր։ Ախպէր, ժողովուրդը ինչ կուզէ թող ասի, բայց էտ կազակ ազգը հարբան է, ինչ է, ինչ չէ, էլի սիրտը մաքուր է, մեզպէս նախանձոտ, չարկամ, բամբասող, մարդու միսը ուտող չէ...

Էսպիսով կէս տարի գնացի եկայ վարժատուն. պարծանք չը լինի ասածս, օրէցօր աւելի ու աւելի լաւ էի սովորում և վարժապետներիս ու մեծաւորիս աչքն էի մտնում. կազակ ընկեր-

ներս ինձ սիրում էին, շէն կենան, գիրք, տետրակ, թուղթ, գրիչ, քարեգրիչ, ինչ որ պէտք էր, ամեն բան տալիս էին, ես էլ որին դասն էի սովորեցնում, որին էլ ձեռքիցս եկած պստիկ մստիկ լաւութիւններ էի անում, մէկ խօսքով եղբայր եղբօր պէս էինք ապրում։ Բայց Մատթէոս-աղայի որդին հետս լաւ չէր. վրաս նայել չէր ուզում, ամաչում էր հետս խօսել, խաղալ կամ դաս սովորել, ամեն պատահողին ասում էր թէ՝ ես վատ ազգից, չքաւոր, ռամիկ տղայ եմ... պապան էլ էսօր էգուց անից փախցնել է ուզում, էնքան է որ՝ մէկ պատճառի է մեն գալիս։

Ասում էր, բայց նրա խօսքը բանի տեղ դնող չը կար։

Ամառը եկաւ, քննութիւնները սկսեցին։ Ինձ առաջին դասարանից երկրորդը տարան— ընդամենը կէս տարի Ճնացի առաջին դասարանում,—լաւ սովորելուս ու գովելի բարքիս համար անունս կարմիր տախտակի վրա գրեցին, մէկ հատ էլ գիրք բախշեցին։

Մէկէլ տարին դասատան մէջ էն առաջին աշակերտն էի յիշւում, էտպէս էլ Ճնացի մինչև դուրս գալս. դասատուն դասատան ետևից, դասատուն դասատան ետևից փոխեցի ու Ստաւրապոլ գալուս երրորդ տարին արդէն չորրորդ դասատանն էի։

Դեռ նոր էի չորրորդ դասատունը անցել, որ գլխիս նորից փորձանք եկաւ։

Մէկ օր Մատթէոս աղան տօնավաճառից ուշ տուն է գալիս, հանում է, ծոցի փողը— իրեն ասելով—քսակով սեղանի վրա է դնում, ճրագը հանգցնում է պառկում։ Միւս օրը որ անկողնից վերէ կենում, քսակը պտրտում է—քսակը չը կայ։ Ամենուրի տղաներից էլ մէկն էլ չը կար, ամենքն էլ տօնավաճառն էին. ծառայ էլ չունէինք—նոր դուրս էր գնացել—տանը ես էի, ինքն էր և որդին էր. երեքիցս մէկն ու մէկը գողացած պիտի լինէր, բայց ո՞վ. ակներև չէ՞. կասկածը իսկոյն ինձ վրա է ընկնում. էտ դանակի բանն էլ նորից աշխարհ է գալիս։ Ես երդումպատառ եմ լինում, երկնքի ամեն սուրբերի անունն եմ տալիս, վկայ եմ բերում,-բոլորն էլ դուր է։ Մատթէոս աղան հրամայում է որ շուտով աբուռ—չուբուռս հաւաքեմ, վեր կենամ Նախիջևան գնամ։ Լաց լինելով գնում եմ մեծաւորիս մօտ, էսպէս էսպէս բան է, ասում եմ։ Նա էլ ի՞նչ անի խեղճը։ «Ժալքը, ժալքը» (ափսոս)...

Նորից նստում եմ սայլը, գալիս եմ Նախիջևան։

Մամաս որ իմանում է էս նոր անբախտութիւնս, թուլանում ընկնում է. քացախով, ջրով, նաշադրով զօռով ուշքի են բերում ողորմելի

կինամարդուն։ Մեծաս փալ է բաց անում ու ասում է. «փողը անպատճառ պիտի գտնի՞ ու անմեղութիւնս լոյս պիտի գայ. ինձ էլ նորից ձայն պիտի տան Ստաւրապոլ»։

Էս անգամ մեծայիս փալը ղորթ է դուրս գալիս, բայց միայն կէսը. էտ կորած քսակը Մատթէոս-աղայի վարսիկի գրպանից է դուրս գալիս։ Սիրտս շահելու համար նշանածին նամակով ապսպրում է, որ ինձ երկու ֆունտ չամիչ, երկու ֆունտ խուրմա, քսան կոպէկ էլ սև փող տան ձեռիս ու ճամփեն։ Ինչպէս է լինում որ մեծաս նրանց տունն է գնում. էտ նամակը առջևը կարդում են, չամիչն ու խուրման թղթի մէջ են փաթաթում, ձեռքը տալիս, փողն էլ ծոցն են դնում։

«Մեծա, ասում եմ, ինչու առիր, ասում եմ, էտ մէկ է թէ իմ անմեղութիւնս ծախածի պէս բան եղայ», ասում եմ։

—Որ չառնէի, ասում է մեծաս, անմեղութիւնդ բոլորովին ձրի տւած պիտի լինէիր հօ, ասում է։

Լաւ որ միտք անես, մեծայիս ասածը ղորթ էր, բայց միայն հայերիս մէջ։ Դանակի բիծը կար հօ վրաս, քսակով փողինն էլ որ կպաւ, բոլորովին արատաւորւեցի, էլ երես չունէի քաղաքի մէջ ման գալու, շուտով մի հնար պիտի գտնէր Նախիջևանից էլնելու, բայց ո՞րտեղ երթայի, ով իր տանը կառնէր ակներև երկու գողութիւնների մէջ բռնւած տղին...

Մեր ազգը ի՞նչ էտպէս է. վատ բան լսելու երկու սուր ականջ ունի, լաւ բանի համար ոչ մէկը։ Քսակով փող գողացածս ամենքն էլ լսել էին, բայց քսակի Մատթէոս աղայի վարսիկի գրպանից ելածը՝ մէկ մարդ էլ լսած չէր. ի՞նչպէս ախր չը տրաքւես...

Մէկ օր տան դռնակի առջև կանգնած եմ ինձ համար, նայում եմ՝ առջևիցս մի կազակ է անցնում, գտակը հանում է և գլուխ է տալիս. «էս ինչ մարդու տունը ո՞ւր է», հարցնում է։

—«Էսպէս էսպէս գնա՛, կը գտնես», ասում եմ. յետոյ իրեն եմ դառնում և հարցնում. «Դու ո՞վ ես»։

—Ես նրա հովիւն եմ, ասում է։

«Ո՞րտեղից ես գալիս», ասում եմ։

—Սև ծովի ափերից, ասում է։

«Ձիդ-սայլդ ապա ո՞րտեղ է», ասում եմ։

—Ձի-սայլ չունեմ, ասում է, ոտքով եկել եմ, ասում է։

Իսկոյն միտքս բան է ընկնում։ Մարդը գնում է։

Միւս օրը մերոնց բան չեմ ասում, կամացուկ տնից դուրս եմ գալիս, ուղղակի գնում, ռաստ եկողին հարցնելով, ճիշտ երկու շաբաթից ոտքս Եկատերինադար եմ դնում. էս հային եմ

գնում, էն հային եմ գնում, վերջը վերջը մէկին գտնում եմ, տարին երեսուն և հինգ ռուբլի վարձով,—էն ժամանակները փողը դեռ ասիգնացիայով (թղթադրամով) կը համարէին,—խանութի աշկերտ եմ մտնում։ Որտեղ սովորածս, ինչ գիտեցածս, ում որդին եղածս ոչ մէկին էլ չեմ ասում, — ճշմարտութիւնը ասելու համը մէկ անգամ առել էի։

Վեց տարի Ճացի տիրոջս խանութում. էտ միջոցում մէկ անգամ թարս խօսք ասել չը տուի, մէկ օր հաշուիս մէջ մի գռոշ պակաս չեկաւ,—հարիւրներ հօ աւելի էր ձեռքիցս անցնում—էն ոչինչ։ Խանութպանը էնքան վստահացել, հաւատացել էր ինձ, որ ամիսներով ոտքը խանութը չէր դնում... Եղած չեղածը մի տասնըերեք-տասնըչորս տարեկան աղջիկ ունէր, տեղն եկած ժամանակ միշտ ասելիս է եղել մօտիկ մարդկանց — «Կատինիս թող տարիքը լրանայ, կառնեմ Մարտիրոսին կը տամ, խանութս էլ նրա վրա կը գրեմ, դրանից յետոյ հայր-որդու պէս բան կը լինենք»։ Լսողներն էլ իսկոյն լուրը ինձ կը բերէին։ Ես էլ յոյսով կեցել եմ թէ էսօր չէ վաղը քառասուն հազարանոց խանութի տէր պիտի լինեմ։ Վարձս էլ չեմ առնում, թէ ինչ է՝ երբ էլ որ լինի՝ ամենն էլ իմն է...

Դու մէկ նայի թէ դեռ գլխիս ինչեր կան գալու...

Տէրս վաղուց Նախիջևան գնացած չէր։ Մէկ օր էլ վեր է կենում և ասում ինձ. «Հածէ, գիտես ինչ, ասում է, սիրաս մէկ Նախիջևան գնալ է ուզում, ասում է. ինչ ես ասում», ասում է։ Ես բան չասի, բայց սիրաս շըվարաւ։ «Էտ ամենը մի հարիւր յիսուն ռուբլու բան չէ՞, ասում է տէրս, թքել եմ վրան, հայդէ արի երթամ... Եթէ որ գամ, Աստուծով, նշանդ էլ կը գնենք, աղջիկս էս էս է տասնըհինգ տարեկան կը լինի. եկող տարի էս ժամանակները պսակներդ էլ կը համբուրեմ ու՝ մաղս էլ պատից կը կախեմ...Հերիք է ինչքան չարչարուեցի, հանգստանալու ժամանակն է, մի քիչ էլ դու տանջուիր...

Կուզէի ասել՝ «մի գնա», տեղով էլ գիտէի որ խօսքս կը լսէր, բայց չասի. «ինչ լինելու է՝ թող լինի», ասի մտքիս մէջ... Ինչ ես կարծում, հոգուս զգացածը հօ զուր չեղաւ...

Էտ իմ տէրս որ Նախիջևանից ետ դարձաւ, էլ առաջուայ մարդը չէր, բոլորովին փոխուել էր. մէջը սառնութիւն մտել էր։ Առաւօտանից մինչև երեկոն կը դար խանութում կը մնար, ամենրոպէ մատեանս աչքը կանցնէր, դախլի մանը փողը կը համարէր, չթի ու ապրանքի թոփերը կը համարէր, երբեմն էլ թոփերը չափել կը տար։ Շուտ հասկացայ քամու որտեղից փչացածը, բայց սուս կեցայ. տեսնեմ՝ դրա վերջը ինչ կը լինի, ասի մտքիս մէջ։

Անցնում է էսպէս շաբաթ, շաբաթ ու կէս... Մէկ օր տեսնեմ, տէրս մի ամուրի նախիջևանցի տղայ է բերում խանութ ու խանութի բարին ամենը նրան հաշուով է տալիս, ինձ էլ նրա ձեռքի տակ է դնում։ Էլի սուս կեցայ, տեսնեմ սրա վերջն էլ ինչ կը լինի, ասում եմ մտքիս մէջ։ Մէկ էլ ինչ լսեմ. տէրս էտ նոր մտած խանութի տղի խօսք է տուել իր աղջիկը նրա հետ նշանելու... Էտ էլ կուլ տուինք։

Երբեմն մտքիցս կանցնի թէ կենդանիների մէջ ո՞րը աւելի է չարքաշը, դիմացկունը. մի ասիլ որ ադամորդուց աւելի դիմացկունը չի եղել։ Ուրիշ անգամն էլ էսպէս միտք եմ անում՝ երանի, ասում եմ, մարդկանցից էլ էն ամենադիմացկունը հայը չէ՞։ Խօսքի վրա, իմ տեղս մի ուրիշ ազգի մարդ, ռուս, նողայ, ֆրանցուզ, գերմանացի որ լինէր, գլուխս ծռած, էտքան մարդոց վատութիւնին, թշնամութիւնին կը դիմանա՞ր, թէ՞ «թքել եմ վրաներդ» կասէր ու գըլխի ճարը կը տեսնէր, խելքի կտրածի պէս։ Ասողներ կան—գուցէ գրքի մէջ էլ գրած է, ով գիտի—ասողներ կան որ ինքն իրեն մեռցնելը հոգուն մեղք բան է, դրա համար, ասում են, Աստուած մեր հոգին դժոխք է տանում. որ էտպէս է, ապա ինչու մարդս անբախտ է, ուզում եմ ասել թէ՝ էտ հրաման տուողը ինչի բանը էն տեղն է հասցնում, որ ողորմելի մարդը աշ-

խարհիս վրա ապրելը մեռնելուց վատ է ճանաչում ու—մեղայ Աստծու մեղայ—կամ դեղ կը խմի, կամ պարանը վզին կը գցի, կամ ջուրը կընկնի, կամ ճակատին գնդակ կը տայ... Զը գիտեմ, ախպէր, խելքիս բանը չէ։

Մէկ օր խանութում նստել եմ, վիզս ճուկ։ Միտք եմ անում, գլխիս անցած բաները շարան-շարան աչքիս առջևից կանցնեն ու ինքս ինձ կը հարցնեմ՝ արդեօք անբախտութիւնս վերջացաւ. մէկ էլ գլուխս բարձրացնեմ ի՞նչ տեսնեմ, տէրս դիմացս կանգնել է, վրաս է նայում.

«Հածէ Մարտիրոս» ասում է։

—Համմէ, աղա, ասում եմ։

«Գիտես՝ մէկ բան ունեմ քեզ ասելու», ասում է։

—Ի՞նչ է ասելուդ, կասեմ։

«Ես քեզ ճամփա դնել եմ ուզում», ասում է։

Սարսափս կը գայ։

—Ի՞նչու, ասում եմ։

—Սիրտս շատ էնպէս կուզի, ասում է. էս խանութի տէրը ես չեմ»...

—Պատճառը, ասում եմ։

Երեսը դարձնում է նոր եկած խանութի տղին ու ասում է—իսկ խօսքը ինձ է, գիտես.

«Մէկ էս լիրը անամօթին տես, երեսը կաշի արել է ու ինձնից պատճառներ կուզի իմանալ, ամեն տեղից հարած-վարածը մոռացել է, դեռ կարող է ուղիղ աչքիս մէջ նայել»։

Յետոյ դառնում է ինձ և ասում.

«Դու պատճառ կուզես իմանալ, հմ. պատճառը էս է – դու գող ես»։

—Ե՞րբ գողութիւնս բռնել ես, ասի։

«Մենակ ես բռնած չեմ քո գողութիւնդ, հազար մարդ բռնել է։ Դու չէիր վարպետիցդ դանակ գողացողը, դրա համար չէր որ քեզ վարպետիդ մօտից փախ տուին, քո պատճառով չէր որ պապադ խեցաւ, յետոյ էլ մեռաւ ողորմելին, աղա Լազարովի ուսուցիչարանից քեզ դուրս չարին։ Ստաւրապոլ Մատթէոս աղայի քսակով փողը դու չէիր գողացողը. դրա համար քեզ թագաւորական վարժատանից չը վռնդեցին, անամօթ շուն... Մեղքդ որ գիտես, գոնէ շան պէս պոչդ քեզ քաշիր, է... էս խաբեբային նայիր, պատճառ կուզի իմանալ։ Անամօթ երեսիդ թքեմ—այ քեզ պատճառ. գող ես, շատ, գող ես։ Ես խանութիս մէջ գող մարդ ունենալ չեմ ուզում, հասկացար, գլուխդ մտաւ։ Շատ քեզ պատճառ»։

—Լաւ, ասի, տուր վեց ու կէս տարուայ վարձս, երթամ։

«Ի՞նչ վարձ, ի՞նչ բան, ի՞նչ փստան... Ում ես յիմարացնում։ Քեզ պէս աշկարա գողը իր վարձը վաղուց առած կը լինի, գուցէ աւելով էլ... Շուտով էլ խանութիցս, թէ չէ ոստիկաններով կը հանեմ ու ձեռքդ ոտքդ շղթայակապ

անել կը տամ, էնպէս ոտքով կուղարկեմ Նախիջևան։ Էս օտար քաղաք է, դու Նախիջևան չը գիտենաս, էստեղ մենք զգոյշ պիտի կենանք, թէ չէ մէկ որ հայերիս անունը կոտրուի, մէկէլ ուղղելու դուռը չը կայ. դրա համար շատ չեմ ուզում գլխիդ աղմուկ բանալ... Դէ հայդէ, որտեղից եկել ես, էլի էնտեղ գնա։

—Աղա, ասի, առանց փողի ինչպէս երթամ, ով ինձ կը տանի. ճամփին ախր ուտել խմել պէտք է, ով ինձ ձրի հաց, ջուր, պառկելու տեղ կը տայ։ Մէկէլ որ Նախիջևան գնացել եմ, գիտես հօ,—դանակ ու քսակ գողանալս քեզ ասողը էտ էլ երևի ասած կը լինի—էնտեղ ծեր մայր ու մեծ մամա ունեմ, ինչ ասեմ երթամ, նրա ծերութեան նեցուկ լինելու տեղ՝ գլուխներին ծանրութիւն երթամ. . Աղա, ոտքդ պաչեմ, մի անի էտ վատութիւնը, տնիցդ փախ մի տալ, ինձ մի խայտառակիլ։ Վեց տարուայ երախտիքս ինչու մոռացար, ինչու մոռացար որ սրանից երկու ամիս առաջ...

Էլ չը կարողացայ բան ասել, արցունքս հայհայ խեղդում էր...

Տէրս քսակը բացեց, միջից տասը հատ թուղթ փող հանեց, առջևս շպրտեց ու ասաւ.

—Էս քեզ չէ, ծեր մօրդ, ժեծայիդ է. քեզ էն էլ կը լինի, ինչ որ վրայի շորիդ ու ժիլետիդ աստառի մէջ կարել ես թագցրել»։

Առի յիսուն ռուբլին, պաչեցի տիրոջ ձեռքը և ելայ խանութից։ Իսկոյն բազար գնացի, վրայիս մահուդէ շորը ծախեցի, տեղը ռուս մուժիկի կոշտ շորը առայ, հագայ և ոտքով եկայ Նախիջևան։ Մեծաս մեռել էր, մամաս էլ իրեն ծեր տեղով մէկի միւսի լացքն անելով օրն էր անցկացնում, էսօր կէս կուշտ, վաղը քաղցած։

Նախիջևան որ եկայ, քսան և երեքիս մէջն էի, ճիշտ էն տարիքս էր, երբ մարդ դեռ նոր աշխարհ է մտնում և աշխատանքի համն է տեսնում։ Բայց դու արի տես որ էս ծաղիկ տարիքիս մէջ աշխարքիս բանից պրծել ձեռք էի վերցրել ու կեանքիս թոյնը պիտի ուտէի ու լեղին խմէի... Ախ, աշխարք, աշխարք։

Լաւ է որ էս վեց ու կէս տարուայ մէջ երեսս էլ փոխուել էր, էն դանակի ու քսակի պատմութիւնն էլ մոռացուել էր։ Իմ ուզածս էլ էտ էր։

Մէկ օր բազար ելայ, մի հատ աժանագին ձի առայ, յետոյ պատահմամբ մի տակառասայլ և ձիու սարք առայ և էն օրից ի վեր մինչև էսօր—ճիշտ քառասուն և երկու տարի է—ջըրկիրութիւն եմ անում»։

—

Մի քիչ յետոյ Մարտիրոսը ասաւ.

«Աղա, մօտդ մանր փող չունիս, հինգ տակառ ջուր եմ բերել, մի մանէթ կանի... Ձիուս համար մի քիչ խոտ ու դարի պիտի առնեմ,

հայվանս երէկւանից ի վեր քաղցած է, տանն էլ խեղճերը քանի ժամանակ է ինձ են սպասում, մի մի կտոր հաց նրանց էլ պիտի տրւի։

—Ահա քեզ քսան մանէթ,—ասի ու ձեռքը կուզէի երկու տասանոց դնել,—մէկ մանէթը ջըրիդ համար, տասնըվինն էլ պատմածիդ համար։

«Ի՞նչ ես անում,— ասաւ Մարտիրոսը,— վարձս ինչ որ է՝ էն տուր։ Դրա համար էլ շնորհակալ կը լինեմ։ Վացունըհինգս լրանում է, աղքատութիւնից աչք բացած չեմ, բայց էլի մարդու ձեռքս մեկնած չեմ, սրանից յետոյ չէ թէ ամօթ, հոգուս մեղք էլ է մուրալը։ Էսօրուայ օրս ջրկիր եմ, բայց—սրանից էլ ստոր դեռ ինչ պարտպմունք կայ—էլի մաքիցս դուրս չի գալիս որ մէկ օր ազնուական տղաների հետ կողքէ կողք նստել եմ ու լաւ լաւ մարդկանցից բան սովորել եմ... Վաղուց է մոռացել էի էս դանակի պատմութիւնը, կարծում էի թէ սրտիս վերքը արդէն փակւել էր, բայց էսօր յիսուն ու հինգ տարուայ կորուստս որ դատայ՝ նորից ա-րիւնը սկսեց կաթելու... Հէյ ժամանակ, ուամ մաքից կանցնէր որ էս ժանգոտած դանակը, որ գոռշ չարժէ, ժամանակով մի շէնքով օջախ քանդել է»...

—Մարտիրոս, ասի, քեզ մի բան հարցնեմ, ղորթը կասես, ասի։

«Մէկ տեսնենք ի՞նչ պիտի հարցնես, ա-

սաւ. թէ որ կարողանամ՝ կասեմ, ինչու չէ»։

—Էտքան անբախտութիւնիդ մէջ ումն ես աւելի մեղաւոր ճանաչում, ասի։

«Ես քեզ մի զորթ բան ասեմ, ասաւ։ Երբ որ դու ուղիղը կուզես իմանալ, ասաւ, իմ անբախտութիւնիս մէջ մեղաւորը մենակ ես եմ»։

—Ի՞նչպէս, ասի, զարմանալով. ապա Մկրտիչ վարպետը, ապա Մատթէոս աղան, ապա խանութպանը...

«Էն ամենը դատարկ բան է, նրանք ոչ մի մեղք չունեն, նրանք էն արին, ինչ որ խելքները կտրեց, ես էլ էն պիտի անէի, ինչ որ իմ խելքն էր կտրում։ Ես քեզ կարճ ասեմ. աշխարքս էսպէս է. ուզում ես որ քեզ չը կծեն՝ նախ ինքդ ամենի վրա հաչի. ուզում ես որ անունդ չը սևացնեն՝ ռաստ եկողի անունը սևացրու. էտ ամենը ես վաղուց գիտէի... բայց մէջս մի բան կար, էտ բանի անունը խղճմտանք է, շատ նա էր իմ էն ամենավատ թշնամիս, նա էր իմ գլխին էս ամեն վատութիւնը բերողը... Ախպէր, մեզ ով է ասել թէ գառը լինենք, որ գայլերը մեզ ուտեն»...

ՀՀ Ազգային գրադարան
NL0408161

12088

ՀԱՍԿԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Հեղ. Մելիք-Հայկազեան. Քսան օր գեանի տակ 20 կ.
2. Օսկար Ուայլդ, Պրինցն ու ծիծեռնակը . . 20 »
3. Ստ. Լիսիցեան. Քաջ ճամփորդներ. . . 25 »
4. Ա.Թ. Խնկոյեան. Գիւղացին ու արջը . . 25 »
5. Ստ. Լիսիցեան. Քաջ զինուորներ, պլեխ . . 8 »

Գինն է 20 կոպէկ

Դիմել՝ գրավաճառներին կամ Թիֆլիս Редакці „АСКЕРЪ"

891.995
Դ-29